

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱԶԱՏ ՄԱՄՈՒԼԻ ՍԿԶԲՆԱԽՈՐՈՒՄԸ (1985-89թթ.)

ԳԵՈՐԳ ԵԱԶԸՃԵԱՆ

Պարբերական մամուլի ուսումնասիրությունը, ըստ էության, տուեալ պետության եւ հասարակության պատմության ուսումնասիրությունն է: Այս դատողությունը լիովին համապատասխանում է նաեւ 1985-89 թթ. ժամանակահատվածում Խորհրդային Միության - ներառեալ Խորհրդային Հայաստանի - ու նրա պարբերական մամուլի ուսումնասիրությանը:

Մեր հետազոտության նպատակն է յետաքննել եւ ուսումնասիրել այն բոլոր վերիվայրումները, որոնք ուղեկցեցին Խորհրդային Միության հայկական պարբերական մամուլին՝ մեծ փոփոխությունների այս հինգ տարիներին, փորձել գտնել այն ընդհանուր օրինաչափությունները, որոնք իրենց ծիրում ընդգրկեցին նաեւ մամուլին, բացայայտել Հայաստանի նորագոյն մամուլի ծննդի պատճառները:

Խորհրդային բազմազգ պետությունը 1980ականների սկզբին յայտնուեց լճացման վիճակում: Հասարակության առաջընթացին խանգարում էր կենտրոնացուած տնտեսավարումը, որն ուղեկցուած էր պետական-կուսակցական վարչահրամայական ապարատի գործունեությամբ: Հասունացել էր ճգնաժամը, մասնաւորապէս տնտեսության բնագաւառում:

Վարչահրամայական եղանակը գործում էր նաեւ հոգեւոր ու լորտում: Գրահրատարակչության բնագաւառը, ներառեալ պարբերական մամուլը, գտնուած էր իշխող միակ՝ կոմունիստական կուսակցության գաղափարական խիստ հսկողության տակ: Խստօրէն հալածուած ու ճնշուած էր այլախոհության ամէն մի փորձ: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության (ՀԽՍՀ) Քրէական օրէնսգրքի 65-67րդ յօդուածները ծանր պատիժներ էին սահմանում հակախորհրդային գաղափարների տարածման եւ հակապետական գործունեության համար: «Սովետական իշխանութիւնը քայքայելու կամ թուլացնելու... նպատակով ագիտացիա կամ պրոպագանդա տանելը» պատժուած էր մինչեւ

եօթ տարի ազատագրկմամբ եւ/կամ երկուսից-հինգ տարի աքսորով. իսկ եթէ մեղադրեալը նախկինում դատապարտուած է եղել, ապա ազատագրկումը կարող էր հասնել տաս տարուան (յօդուած 65). «պատերազմի պրոպագանդան» պատժուած էր մինչեւ ութ տարի ազատագրկմամբ եւ մինչդէ հինգ տարի աքսորով (յօդուած 66). նման պատժաչափեր էին սահմանուած «հակասովետական կազմակերպութեան մասնակցելու համար (յօդուած 67): Ըստ այլախոհ իշխան Մկրտչեանի քաղաքական գործունէութեան մասին պատմող «ձակատագրերի սահմանը» վաւերագրական ֆիլմի¹ 1957-91ին, Հայաստանից ընդհանուր հաշուով 91 հոգի է դատապարտուել այս յօդուածներով:

Խօսքի, խղճի եւ մտքի ազատութիւնը խստօրէն ճնշուած էր նաեւ պարբերական մամուլում: Մամուլը վերածուել էր իշխող կուսակցութեան ձեռքում մի գործիքի, որով կուսակցութիւնը պարտադրում էր իր միակարծութիւնը հասարակութեան: Գրողները, լրագրողները եւ առհասարակ հոգեւոր ոլորտի աշխատողները իրենց «այլախոհական» մտքերն արտայայտելու համար դիմում էին տարբեր հնարների՝ այլաբանութեան, բազմիմաստութեան, սիմվոլիզմին. այսուհանդերձ, միշտ չէ որ այս հնարները վրիպում էին գրաքննիչների ու կուսակցական հաւատաքննիչների աչքերից:

Հայաստանում ողջ մամուլն ու գրահրատարակչութիւնը գտնուած էին Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի (ՀԿԿ Կենտկոմի) գաղափարախօսութեան գծով քարտուղարի մուրճի եւ գրաքննութիւնն իրականացնող պետական մարմնի սալի միջեւ: ՀԿԿ Կենտկոմի կառույցում կային մշակութի, պրոպագանդայի եւ գաղափարախօսական բաժիններ եւ մամուլի բաժանմունք, որոնք էլ վերահսկում էին հոգեւոր ոլորտը: Մամուլի բաժանմունքի վարիչը, ի պաշտօնէ, Կենտկոմի պրոպագանդայի բաժնի վարիչի տեղակալն էր հանդիսանում: Այս բոլորի վերադասն էր Կենտկոմի՝ գաղափարախօսութեան գծով քարտուղարը, որն ունէր իր անձնակազմը: Իսկ Կենտրոնում՝ Մոսկուայում, Խորհրդային Միութեան Կոմունիստական Կուսակցութեան (ԽՄԿԿ) Կենտրոնական Կոմիտէի կառույցում գործում էր պրոպագանդայի բաժինը, որին ենթարկուած էին միութենական հանրապետութիւնների կոմկուսների կենտկոմների գաղափարախօսական բաժինները: ՀԿԿ Կենտկոմի գաղափարախօսութեան գծով քարտուղարն ու նրա անձնակազմը յաճախ միջամտում էին գրաքննութիւնն իրականացնող պետական մամնի աշխատանքներին: Մամուլի ոլորտում ամէն մի մանրուք մանրամասն քննուած էր Կենտ-

կոմի գաղափարախօսական բաժնում, առաւել կարեւոր թուացող հարցերը՝ նոյնիսկ կենտկոմի Բիւրոյում²։ Կենտկոմն էր հաստատում կարեւորագոյն պարբերականների գլխաւոր խմբագիրներին, պատասխանատու քարտուղարներին եւ խմբագրութեան անձնակազմին³, հաւանութիւն տալիս պարբերականների անուանափոխութեանը, նոր պարբերականների հրատարակութեանը, եւ ըն. կամ մերժում նման դիմումները։

Ինչպէս միութենական միւս հանրապետութիւններում, այնպէս էլ Խորհրդային Հայաստանում, միխիտոբների Խորհրդին (կառավարութիւն) կից գործում էր Պետական գաղտնիքների պահպանութեան գլխաւոր վարչութիւնը, որն առաւել ծանօթ է նրան տրուած «Գլաւլիտ» ոչ-պաշտօնական կրճատուած անունով։ Այս վարչութեան պաշտօնական ֆունկցիան էր պահպանել ու հրապարակումից զերծ պահել պետական ու ռազմական գաղտնիքները։ Գաղափարական հարցերը, այդ թւում նաեւ պարբերական մամուլում, վերահսկելու գործը բացառապէս կենտկոմի գաղափարախօսական բաժնի եւ գաղափարախօսութեան գծով քարտուղարի անձնակազմի իրաւասութեան մէջ էր մտնում⁴։ Այսուհանդերձ, Գլաւլիտը յաճախ ի՛նքն էր խառնւում կամ կենտկոմի աշխատակիցները Գլաւլիտին էին խառնւում գաղափարախօսական բնոյթի հարցերին։ Պետական մարմինների աշխատանքին կոմկուսի անմիջական վերահսկողութիւնն արտայայտւում էր նաեւ այն փաստով, որ Գլաւլիտի պետին հաստատելու եւ ազատելու բացառիկ իրաւունքը վերապահուած էր ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղարին։ Առանց վերջինիս համաձայնութեան, եթէ «վերեւներում» (այսինքն՝ Մոսկուայում) որոշուած էլ լինէր աշխատանքից հեռացնել Գլաւլիտի ղեկավարին եւ նոր պետ նշանակել, այդ որոշումը չէր գործադրւում։ 1980ականներին նման երկու դէպք է պատահել։ Երկու դէպքում էլ ՀԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Կարէն Դեմիրճեանը, «փրկել է» իր բարեկամ, Գլաւլիտի պետ Գրիգոր Մարտիրոսեանին⁵։ Պետական ու ռազմական գաղտնիքների Մոսկուայից ուղարկուող ցուցակի կողքին, Գլաւլիտը առաջնորդւում էր նաեւ արգելուած անունների ինդեքսով, որը կազմում էին ՀԿԿ կենտկոմի գաղափարախօսութեան գծով քարտուղարի անձնակազմն ու Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճիւղը։ Վերոյիշեալ երկու ցուցակները պարբերաբար նորացւում էին։

Իսկ ինչպէ՞ս էր գործում գրաքննութիւնը։ «Գլաւլիտի խմբագիրները նախապէս աչքի էին անցկացնում այն ամէնը, ինչ նախատեսուած էր մամուլի եւ եթերի համար, ջնջում էին այն, ինչ

համարում էր պետական գաղտնիք ու տեքստի վրայ հրապարակման թոյլտուութիւն-դրոշմակնիք դնում: Կարգերի գաղափարախօսական կուսութեանը որեւէ սպառնալիք, գաղափարական երկիմաստութիւն, «հակասովեսականութեան շունչ» նկատելով՝ գլաւլիտականը պարտաւոր էր զանգահարել իր ղեկավարութեանը: Սրանք կապում էին կուսակցութեան կենտկոմի գաղափարախօսութեան բաժնի աշխատակիցների հետ, այնտեղից գտնում էին թերթի խմբագրին եւ համապատասխան ցուցում տալիս», - գրում է երեւանեան *Կոմսոմոլց* (կոմերիտական) ռուսերէն երիտասարդական թերթի խմբագրութեան երբեմնի անդամ Վալերի Ալդինեանը⁶: Հասկանալի է, որ խմբագիրը, հազուադէպ բացառութեամբ, «վտանգաւոր» համարուող նիւթը տեքստից անմիջապէս հանում էր: Գրաքննութիւնն այսքանով չէր աւարտում: Տպարանում նախնական շարուած նիւթը (օտիսկ) վերստին տարւում էր Գլաւլիտ, որի գրաքննիչները արդէն շարուած նիւթը մի անգամ եւս աչքի էին անցկացնում, ապա նոր միայն խփում տպագրութեան թոյլատրելու դրոշմակնիքը: Դրանից յետոյ միայն, տպարանի անձնակազմը, առանց պատասխանատուութիւն կրելու իր տպագրածի համար, կարող էր տպել նիւթը:

Հայաստանի Գլաւլիտը վերահսկում էր նաեւ արտերկրից - ներառեալ սփիւռքահայ գաղթօճախներից - ստացուող, «արգելուած» (վաճառքի չհանուող), ինչպէս եւ վաճառքի համար նախատեսուած պարբերականներին: Վերջիններիս «անհաճոյ» համարուող համարները վաճառքի չէին հանւում, թէեւ փոխարժէքը ուղարկւում էր այդ պարբերականներին:

Հետաքրքրական է եւ մտորումների տեղիք է տալիս Գր. Մարտիրոսեանի մեզ յայտնած վկայութիւնը, որ Գլաւլիտի պետն ինքը իրաւունք չունէր իր կնիքը դնելու գրաքննուած նիւթի վրայ: Դրոշմակնիք խփելու իրաւունք ունէին միայն գրաքննիչներն ու Գլաւլիտի պետի տեղակալը, բայց ոչ պետը:

Նիւթի տպագրումից յետոյ չլ հարցը վերջնականապէս չէր աւարտւում: Պատահում էին դէպքեր, երբ ինչ-ինչ պատճառներով, գրաքննիչները թոյլ էին տալիս տպել նիւթեր, որոնք կենտկոմականների սրտովը կարող էին չլինել: Տպագրութիւնից յետոյ գործի էին անցնում «մատերիալիստները»⁸, որոնք նիւթի հեղինակի հետ իրենց անձնական հաշիւները մաքրելու կամ այլ մղումներով դիմումներ էին յղում կենտկոմին եւ մինչեւ իսկ Մոսկուայի համապատասխան մարմիններին: Նոյն Ալդինեանը յայտնում է, որ իրեն «չաբաթը մէկ կենտկոմ էին կանչում, դարակից հանում էին թերթի կարմիր մատիտով ակօսուած համարները եւ հաւատաքն-

նութեան սէանսներ էին անցկացնում»⁹։ Իսկ երբ հրապարակուած նիւթը, կենտրոնականների դատողութեամբ, լուրջ վտանգ էր պարունակում, ապա տպագիր նիւթը անմիջապէս հանուում էր արտադրութիւնից կամ շրջանառութիւնից (եթէ արդէն հասցրել էին այն տարածել), հաւաքուում տպարանից, բաժանուած հասցէներից, գրախանութներից ու լրագրական կրպակներից։ Կենտրոնը այս քայլին դիմեց 1988ին *Երեկոյեան Երեւանի Մարտի 18ի համարը, Ոգնի երգիծաթերթի 22րդ համարը, Գարուն ամսագրի 10րդ եւ Գիտութիւնների Ակադեմիայի Լրաբեր Հասարակական Գիտութիւնների հանդէսի 11րդ համարները մէջտեղից վերացնելով*։ Այս համարները անմիջապէս լոյս տեսան նոր, «վտանգագերծ» ու մկրատուած տարբերակներով։ Այդուհանդերձ, այս արգելուած համարներից փրկուել են մի քանի օրինակներ, որոնք մատենագիտական հազուագիւտ նմուշներ են այսօր։ Այս պարբերականների, յիշեալ համարների «մեղքն» այն էր, որ պարունակում էին, ըստ կենտրոնականների, «նացիոնալիստական» արտայայտութիւններ, գաղափարա-քաղաքական շեղումով նիւթեր...

Սակայն, սխալ է գրաքննութեան ամբողջ գործունէութիւնը բացասական համարել։ Այն ունէր իր դրական կողմը եւս։ Գաղտնիքների ու գաղափարական այլախոհութեան հետ, խստորէն արգելուած էր թշնամանքի եւ բռնութեան կոչ անող նիւթերի հրապարակումը, պոռնկագրութիւնը։ Եւ այս արգելքները շատ խստորէն կիրառուում էին։ Այս արգելքները թէեւ յետագայում, Հայաստանում խորհրդային կարգերի փլուզումից յետո՛ւ ընդունուած օրէնքներով եւս պահպանուեցին, սակայն այն կրեց միայն ձեւական բնոյթ։ Այսօր, Հայաստանը հեղեղուած է տեղական ու արտասահմանեան պոռնկագրական, հայկական ազգային աւանդութիւններին անյարիր բովանդակութեամբ անհաշիւ պարբերականներով։ Մամուլի ազատութիւնը, արդիւնաւետ վերահսկողութեան բացակայութեան պայմաններում, առաջնորդեց մամուլի ոլորտում անիշխանութեան ու սանձարձակութեան։

Խորհրդային երկրի գրահրատարակչական բնագաւառում այսպիսի իրադրութիւն էր տիրում, երբ 1985ին Մարտին երկրի ղեկը ստանձնեց ԽՄԿԿ Կենտկոմի նոր Գլխաւոր Քարտուղար Միխայիլ Գորբաչովը։ Նա երկրում օրէցօր հասունացող ճգնաժամից ելքը տեսաւ վերեւից իջեցող բարեփոխումների մէջ։ Գորբաչովը ամբողջ երկրով մէկ հուշակեց վերակառուցման (Պերեստրոյկա) ու Հրապարակայնութեան (Գլասնոստ) քաղաքականութիւն¹⁰։ Այս ռուսերէն երկու բառերը մտան համաշխարհային քաղաքականութեան բառապաշարի մէջ։ Այդ քաղաքականութեամբ, տնտեսական,

հասարակական եւ այլ ազատութիւններն էին տրուում խորհրդային մարդկանց: Այդ ազատութիւնների ծիրը, անշուշտ, խիստ սահմանափակ էր. այն գէթ սկզբնական շրջանին, բացառում էր քաղաքական ազատութիւնները անհատների, հաւաքականութիւնների ու ժողովուրդների համար:

Այս մեծ փոփոխութիւնները անպայմանօրէն ուղեկցուելու էին նոր, ոչ-պետական, ազատ մամուլի երեւումով. մի մամուլ, որը մի քանի տարի առաջ առանձնապատուկ դաժանութեամբ ճնշուել էր ԽՄԿԿ կենտրոնի նախկին Գլխաւոր Քարտուղար Եուրի Անդրոպովի կարճատեւ ղեկավարութեան (1982-84) ժամանակաշրջանում:

Վերակառուցման եւ Հրապարականութեան քաղաքականութիւնը, համեմատած բալթեան երկրների ու Ռուսաստանի, ուշացած հասաւ Հայաստան, որի մամուլը այս երկրների մամուլից աւելի անազատ վիճակում էր¹¹: Հայաստանի Կոմկուսի ղեկավարութիւնն ու պետական-կուսակցական աստիճանաւորները չէին ուզում զիջել իրենց առանձնաշնորհալ դիրքերից: Սակայն, կանաչ ազդանշանը «վերելից» տրուած էր: Վերակառուցումը, թէկուզ ուշացած, հասնելու էր Հայաստան: Վերակառուցումը Հայաստանում իրենք՝ ժողովրդական զանգուածներն էին պարտադրելու երկրի ղեկավարութեանը:

1960ականների կէսերի ժողովրդական ալեկոծումից¹² 20 տարի յետոյ, Հայաստանի հասարակութեան մէջ առաջին անգամ տեղի էին ունենում լուրջ խմորումներ: Դրանք, 60ականների նման, ուղեկցուելու էին հասարակական պահանջմունքներին ընդառաջ գնացող ու հասարակութեան տրամադրութիւններն արտայայտող պարբերական մամուլի ծնունդով:

Նոր կազմակերպութիւններն ու նոր մամուլը ծնւում էին ոչ-անբերրի հողում: Դրանք ունեցել էին իրենց նախորդները ու նրանց օրգանական շարունակութիւնն էին հաղիսանում:

1965ի Մեծ Եղեռնի յիսնամեակի նշումը Հայաստանում ազգային զարթոնքի հզօր ալիք առաջացրեց: Այդ ալիքի հետ հիմնուեցին գաղտնի կազմակերպութիւններ, որոնցից առաւել ակտիւ գործունէութիւն ծաւալեց Ազգային Միացեալ Կուսակցութիւնը (ԱՄԿ): ԱՄԿն հիմնել է նկարիչ Հայկազ Խաչատրեանը 1966ին, Շահէն Յարութիւնեանի եւ Ստեփան Զատիկեանի հետ: Նոյն տարւայ Յունիսին, 18ամեայ Պարոյր Հայրիկեանը իր համախոհների հետ տարածում է Յասում թռուցիկը: Հայրիկեանի խմբակը 60ականների վերջում միանում է ԱՄԿին: Այլախոհները ակտիւանում ու կազմակերպւում են յատկապէս 60ականների վերջին ու 70ականների սկզբին: 1968ին, Շիրակ Գիւնաշեանի նախաձեռնու-

Թեամբ, հիմնուած է «Յանուն Հայրենիքի» գաղտնի կազմակերպութիւնը, որը Աբովեան քաղաքում տպագրում է համանուն պարբերաթերթը: Սակայն այն երեւան տեղափոխելու ժամանակ, խումբը ձերբակալուած է, ապա դատուած եւ աքսորուած¹³: 1967ին, ԱՄԿն տպագրում ու տարածում է *Փարոս* թերթի առաջին համարը: Յաջորդ տարի, ԱՄԿն ընդլայնակում հրատարակում է *Երկունք* ամսագիրը 5000 տպաքանակով եւ «Մահ կամ Ազատ Հայաստան» կարգախօսով¹⁴: Պարբերականը տարածող խումբը յայտնաբերուած է Պետական Անվտանգութեան Կոմիտէի կողմից, դատուած եւ աքսորուած: Այդուհանդերձ, մինչեւ 1973թ. լոյս են տեսնում *Փարոսի* 2րդ¹⁵ եւ 2րդ «լրացուցիչ» համարները: Թերթի 4րդ համարը 1981ին հրատարակում են Աշոտ Նաւասարդեանն ու Ազատ Արշակեանը: Նրանց եւս ձերբակալուած ու աքսորում են: Սակայն, այլախոհների հետ դաժան դատաստանը, մինչեւ իսկ 1978ին Ստեփան Զատիկեանի ու Նրա երկու ընկերների գնդակահարութիւնը չկարողացան ընկճել ազատասիրական ձգտումները: 70ականների վերջին եւ 80ականների սկզբին Հայաստանում գործում էին մի քանի այլախոհական գաղտնի կազմակերպութիւններ՝ Ռաֆայէլ Համբարձումեանի, Սամուէլ Գէորգեանի, Սամուէլ Սեդրակեանի եւ համախոհների խմբակը¹⁶, «Հող», «Հայ Երիտասարդների Միութիւն»¹⁷, «Հայ Ազգային Միութիւն», եւն.:

Օգտուելով վերակառուցման թոյլատրած սահմանափակ ազատութիւններից, ոչ-պաշտօնական կազմակերպութիւններ երեւան եկան 1986-87ին: Հիմնուեցին «Զանգակատուն», «Անբերդի վերականգնման Ֆոնդ», «Մաշտոց» եւ այլ հասարակական կազմակերպութիւններ, որոնք առերեւոյթ զբաղւում էին ոչ-քաղաքական գործունէութեամբ՝ յուշարձանների պահպանութեան եւ վերանորոգման, հայոց լեզուի անադարտութեան, շրջակայ միջավայրի պահպանութեան, հայկական դպրոցի ու կրթութեան հարցերով: Սակայն, նրանց գործունէութեան խորքը քաղաքական էր. նրանք ստիպուած էին այլ դիմակներով հանդէս գալ, որովհետեւ վերակառուցման թոյլատրած ազատութիւնների սահմանը յստակ էր՝ ո՛չ քաղաքական այլախոհութեանը:

Բայց ժամանակները փոխուած էին: Կեանքը Գորբաչովին շուտով հասկացնել տուեց, որ իր բարենորոգումները արդիւնք չեն տալու, եթէ չբարեփոխուի նաեւ երկրի քաղաքական համակարգը: 1987ի սկզբից սկսեցին ազատ արձակել բանտարկուած ու աքսորւած քաղաքական այլախոհներին, միաժամանակ նրանց խստորէն զգուշացնելով յետագայում քաղաքական գործունէութիւն չտանել: 1987ի գարնանը Մոլդովայի (Ռուսաստան, Վոլգա գետի աւազան)

արգելարան-ճամբարից տուն վերադարձաւ վետերան այլախոհ Պարոյր Հայրիկեանը: Նա անմիջապէս ձեռնամուխ եղաւ այլախոհական շարժումը վերակազմակերպելու գործին: Նոյն տարուայ Մայիսի 8ին, միջանի այլախոհների հետ նա հիմնեց «Նաւասարդեան Աշոտի եւ Արշակեան Ազատի Պաշտպանութեան Կոմիտէ»ն, որը յաջորդ ամիսներին վերանուանուեց «Քաղբանտարկեալների պաշտպանութեան հայկական կոմիտէ»: Այս կոմիտէն 1987ի Մայիսին լոյս ընծայեց իր *Տեղեկագիրը* հայերէն եւ ռուսերէն լեզուներով: Հայերէն մասի խմբագիրն էր Արա Ստեփանեանը, ռուսերէն մասի խմբագիրը՝ Գէորգի Խոմիզուրին: *Տեղեկագիրը* շարունակ է մեքենագիր եղանակով, ինչպէս յետագայի ինքնահրատ շատ պարբերականներ: Չափսը՝ А-4 ֆորմատ (21.0x29.7սմ.): Էջերը համարակալուած ու կազմուած չեն: յետագայում Հայրիկեանի հիմնադրած Ազգային ինքնորոշում Միաւորման պարբերականներում, մասնաւորաբար *Անկախութիւն* թերթում եւ *Հայրենիք* ամսագրում տեղեկութիւններ կան որ *Տեղեկագրից* լոյս է տեսել առնուազըն 7 համար, մինչեւ 1988ի Յունուարը: Թիւ 2-3ը միացեալ համար է, ուր տպագրուել է Կոմիտէի կանոնադրութիւնը:

Տեխնիկական աղաղակող թերութիւններով հանդերձ, Հայաստանի գորբաշովեան ժամանակաշրջանի ազատ մամուլի պատմութեան մէջ *Տեղեկագիրը* մտել է որպէս այդ մամուլի փշոտ ճանապարհը հարթող առաջին պարբերականը:

Տեղեկագիրը հասարական-քաղաքական կեանքում զգալի դեր չունեցաւ հիմնականում երկու պատճառով. առաջին, այն նախատեսուած չէր ժողովրդական լայն խաւերի համար, եւ երկրորդ, այն աւելի շատ տեղեկատուական-փաստագրական բնոյթ ունէր, քան գաղափարախօսական: Եթէ սրանց աւելացնենք նաեւ այն, որ *Տեղեկագիրը* բազմացուել է շատ սահմանափակ քանակով, ապա հասկանալի կը լինեն նրա հասարակական շատ թույլ ազդեցութեան պատճառները: Այն աւելի շուտ յիշեալ կոմիտէի ներքին շրջաբերականն էր, քան դասական իմաստով՝ պարբերական:

Տեղեկագրի ծնունդը զուգադիպեց գորբաշովեան ժամանակաշրջանի համամիութենական քաղաքական առաջին պարբերականի՝ *Գլասնոստի* ծննդին: Նախկին քաղբանտարկեալ Սերգէյ Գրիգորեանցը Մայիսին Մոսկուայում լոյս ընծայեց պարբերականի անդրանիկ համարը՝ տեղեկագրի տեսքով: Օգոստոսից, պարբերականը սկսեց հրատարակուել ամսագրի տեսքով՝ կանոնաւոր պարբերականութեամբ: *Գլասնոստը*, ռուսերէնի կողքին, լոյս է տեսել նաեւ ութ այլ լեզուներով, որոնց շարքին՝ հայերէն¹⁸:

1987ի Օգոստոսին աքսորավայրից Երեւան վերադարձան Աշոտ Նաւասարդեանը, Ազատ Արշակեանը եւ այլ քաղաքանտարկեալներ: Նրանց վերադարձով, նոր թափ ստացաւ այլախոհական շարժումը Հայաստանում:

Սեպտեմբերի 27ին, Ազգային Միացյալ Կուսակցութեան հինգ անդամներ՝ Պարոյր Հայրիկեանը, Մովսէս Գորգիսեանը, Մեխակ Գաբրիէլեանը, Սուսաննա Աւագեանը եւ Ռազմիկ Մարկոսեանը հիմնեցին Ազգային Ինքնորոշում Միավորումը (ԱԻՄ), մի քաղաքական կազմակերպութիւն, որը կարեւոր դեր ունեցաւ Հայաստանի անկախութեան վերականգնման համար մղուած պայքարում: Նոյեմբերի կէսին, Ռաֆայէլ Համբարձումեանի գրած *Թուղթ ընդհանրական եւ Ծորդորակ գրքոյկները* Հայրիկեանի կողմից որպէս ԱԻՄի քաղաքական ուղեգիծ ընդունումից անմիջապէս յետոյ, ԱԻՄին է միանում Համբարձումեանի խմբակը¹⁹, որով գաղափարական ու կազմակերպական զգալի ուժ է հաղորդուած ԱԻՄին:

Գիտակցելով պարբերական մամուլի անհրաժեշտութեանը, ԱԻՄը շուտով սկսեց հրապարակել երկու պարբերական: Հոկտեմբերին լոյս տեսաւ *Հրապարակայնութիւն* հանդէսը, իսկ նոյն ամսի 24ին՝ *Անկախութիւն* շաբաթաթերթի առաջին համարը: *Հրապարակայնութիւն* հանդէսը այսօր անգտանելի է եւ չկայ նոյնիսկ ԱԻՄի արխիւում: *Անկախութեան* տարբեր համարներում բազմաթիւ չիշատակումներ կան այն մասին, որ այն լոյս է տեսել մինչեւ 1988ի Մայիսը, երբ վերանուանուել է *Հայրենիք*²⁰: Ըստ ԱԻՄի մօտիկ, լաւատեղեակ աղբիւրների, հակառակ պարբերականների անւան նմանութեան, երեւանեան *Հրապարակայնութիւնը* մոսկովյան *Գլասնոստի* հայերէն տարբերակը չի եղել, այլ՝ ԱԻՄի սգփական պարբերականը:

Անկախութիւն շաբաթաթերթը Հայաստանի նորագոյն մամուլի մասին գրած համարեա բոլոր հեղինակների կողմից համարուած է առաջին ազատ պարբերականը Հայաստանում: Եթէ ժամանագրական առումով *Անկախութիւնը* զիջում է *Տեղեկագրին*, միգուցէ նաեւ *Հրապարակայնութեանը*, այսուհանդերձ, նրան տրուած այս պատիւը լիովին արդարացուած է: Բաւարար է միայն այն փաստը, որ նա բացայայտ քաղաքական պայքարի ելաւ տիրող կոմունիստական վարչակարգի դէմ: *Անկախութիւնը* քարոզում էր ազգի միասնութիւն եւ Հայաստանի անկախութեան վերականգնում: Այս գաղափարները արտայայտուել են թերթի առաջին տարիների համարների նշանաբաններում՝ «Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է» եւ՝ «Մեր նպատակն է ազգային պետականութեան վերականգնումը, առաջնա-

հերթ խնդիրը՝ *Խորհրդային Հայաստանի անկախացումը հանրաքուէի միջոցով*»։ Ընդ որում, ԱԽՄՆ ու իր թերթը Հայաստանի անկախութեան վերահաստատման ճանապարհ էին տեսնում քաղաքական պայքարի ուղին, ոչ-բռնի միջոցները, մասնաւորաբար հանրաքուէի միջոցով ինքնորոշումը, մի իրաւունք, որը թէկուզ ձեւականօրէն, շարադրուած էր 1977ի Խորհրդային Միութեան եւ Խորհրդային Հայաստանի սահմանադրութիւնների համապատասխանաբար 72րդ եւ 69րդ յօդուածների մէջ։

Այդուհանդերձ, ԱԽՄում եղել են լուրջ տարակարծութիւններ՝ անկախութեան հասնելու վերաբերեալ։ Նրանում եղել են երկու ուղղութիւններ, որոնք պայմանականօրէն կոչւում են «Անկախութիւն» եւ «Ինքնորոշում»։ «Անկախութիւն» թեւը գլխաւորում էին Մեխակ Գաբրիէլեանը եւ Ռաֆայէլ Համբարձումեանը. «Ինքնորոշում» թեւը՝ Մովսէս Գորգիսեանը։ «Անկախականները» կողմնակից էին միանգամից Հայաստանի անկախութիւնը հռչակելուն, մինչ «ինքնորոշման» կողմնակիցները նախընտրում էին անկախութեանը փուլ առ փուլ հասնելու տարբերակը։ Անկախութեան հասնելու մարտավարական այս երկու ողիների շուրջ տարակարծութիւնը իր արտացոլումն է գտել ԱԽՄի մամուլում. 1989ի սկզբին լոյս տեսաւ *Ինքնորոշում* պարբերականի 1988ի Դեկտեմբերի թուականը կրող առաջին համարը։ Ըստ Համբարձումեանի վկայութեան, Հայրիկեանը եղել է երկրորդ թեւի կողմնակից եւ մտադիր էր *Անկախութիւն* թերթի անունը «Ինքնորոշում» դնել²¹։

Սակայն, *Անկախութիւնը* մնաց անգերազանցելի։ 1988-90ին, արցախեան շարժման անկախական շարժման վերաճելուն զուգընթաց, «Անկախութիւն» թեւը յաղթեց ԱԽՄում։ Դրա ապացոյցներէց է ԱԽՄի *Ինքնորոշում* թերթի կարճատեւ կեանքն ու *Անկախութիւն* թերթի երկարակեցութիւնը։

Անկախութիւնը ոչ-կոմունիստական քաղաքական երկրորդ²², իսկ միութենական հանրապետութեան անկախութիւնը քարոզող առաջին շաբաթաթերթն էր ամբողջ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնների Միութիւնում, եւ առաջինը՝ Խորհրդային Հայաստանում։

Անկախութեան առաջին համարը խմբագրել է Հայրիկեանը, սակայն թերթի հիմնական հեղինակն ու ուղղութեան յստակեցնողը եղել է Համբարձումեանը, որը թերթի 4-76րդ համարներն է խմբագրել, սկզբում (№. 4-40) «Համազասպ» ծածկանունով, այնուհետեւ՝ իր իսկական անունով։ Համբարձումեանից յետոյ, *Անկախութիւնը* խմբագրել են այլ ԱԽՄականներ։

Անկախութիւնը սկզբնական շրջանում բազմացուել է լուսա-
տիպ եղանակով, ապա պատճէնահանման միջոցով: 1987-88ին նրա
տպաքանակը փոքր էր, սակայն այդքանն իսկ բաւարար էր թեր-
թը ժողովրդական իսաւերի մէջ տարածելու եւ մթնոլորտ ստեղծե-
լու համար: Անկախութիւնը այն քիչ պարբերականներից էր, որ
1988ին ժամանակագրում էր արցախեան շարժման իրադարձու-
թիւնները: Թերթը 1988ի Փետրուարից մինչեւ աշունը անհատնե-
րի միջոցով բացառապատօէն տարածուեւ-վաճառուեւ էր Երեւանի
Օպերայի հրապարակի եւ այլ վայրերի արցախեան հանրահաւաք-
ներում:

Անկախութիւնը հայ նորագոյն պարբերական մամուլի պատ-
մութեան մէջ առաջին պարբերականն է, որը միանշանակ քարո-
զում էր Հայաստանի անկախ պետականութեան վերականգնման
գաղափարը եւ մերժում որեւէ այլ լուծում՝ նորացուած ԽՍՀՄ-ի
Հայաստանի անդամակցութիւն, համադաշնութիւն, եւլն.: Արցախի
հարցի լուծումն էլ ԱԽՄ՝ ու նրա մամուլը տեսնում էին Հայաս-
տանի անկախութեան եւ Լեւոնային Ղարաբաղի ինքնավար Մարզի
(ԼՂԻՄ) ազգաբնակչութեան ինքնորոշման իրաւունքը յարգելու
մէջ: ԼՂԻՄ-ի Խորհրդային Հայաստանին միացումը Մոսկուայից ա-
կնկալողներին Անկախութիւնը «միամիտներ» ու «ստրկամիտներ»
էր յայտարարում:

Թերթի անուան ընտրութեան եւ քաղաքական հաւատամքի
մասին լաւագոյնս պատկերացում է տալիս Անկախութեան 1987ի
№ 2, Հոկտեմբերի 30 թուակիր համարում տպագրուած «Ազգային
ինքնորոշման իրաւունքը եւ հայկական հարցը» անստորագիր
գրութիւնը: Այնտեղ ասուած է. «Մեր ողջ պատմութեան ընթաց-
քում մենք երբեք մեր ճշարիտ կամքն արտայայտելու իրաւունք
չենք ունեցել: Այս է մեր բոլոր դժբախտութիւնների պատճառը՝
ինքնուրոյն վճիռ կայացնելու կատարեալ բացակայութիւն: Ինք-
նուրոյն մտածելու՝ ՀՈԳԵՒՈՐ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ, մենք կամենում
ենք նաեւ յիշեցնել իրաւունքի անհրաժեշտ նախապայմանի՝ հոգե-
ւոր անկախութեան մասին» (մեծատառերը թերթինն են - Գ. Ե.):

Հետաքրքրական է նշել, որ ԱԽՄը քայլերի է դիմել Անկախու-
թիւն շաբաթաթերթին ու Հրապարակայնութիւն հանդէսը օրինա-
կանացնելու ուղղութեամբ: Այս նպատակով, Հայրիկեանը հանդի-
պում է ունենում ՀԽՍՀ Գերագոյն Խորհրդի իրաւաբանական
բաժնի վարիչ Ռաֆայէլ Եղեանի հետ: Վերջինս Հայրիկեանին բա-
ցատրում է «օրէնքով նախատեսուած կարգը». «(Ազգային ինքնո-
րոշում - Գ. Ե.) միաւորումը կարող է համապատասխան մարմին-
ների թույլտուութեամբ Մամուլի Պետական կոմիտէի միջոցով ո-

րեւէ տպարանի հետ պայմանագիր կնքել» (ընդգծումը մերն է - Գ. Ե.)²³: Հասկանալի է, որ այդ «համապատասխան մարմինները» առաջին հերթին ՀԿԿ Կենտկոմն էր, որից նման թույլտուութիւն ստանալը հիմնովին բացառուում էր: Միջանի ամիս յետոյ, ԱԽՍՂ երկրորդ անգամ է դիմում օրինականացման համար: Հայրիկեանի ձերբակալութիւնից յետոյ ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի նախագահութեան ուղղուած ԱԽՄի ներկայացուցիչների խորհրդի 1988ի Ապրիլի 2ի բողոքի նամակի Յրդ կէտով պահանջուում է ԱԽՄին շնորհել «սեփական հրատարակութիւնները տպագրական եղանակով բազմացնելու եւ տարածելու օրինական իրաւունք»²⁴:

Այդուհանդերձ, նման արտօնութիւն չէր տրուելու, եւ Անկախութիւնը, Հրապարակայնութիւնը եւ ԱԽՄի միւս պարբերականները մինչեւ 1990ի կէսերը լոյս էին տեսնելու անլեզալ ձեւով:

1987ի աւարտին, թէկուզ դանդաղօրէն, սակայն աստիճանաբար Հայաստանում մեծանում էր հասարակական ակտիւութիւնը: Հոկտեմբեր 17ին կայացաւ առաջին հրապարակային հանրահաւաքը ի պաշտպանութիւն արցախահայութեան ինքնորոշման իրաւունքի: Հաւաքը ճնշուեց: Յաջորդ օր, Օպերայի հրապարակում, Ռ. Համբարձումեանի գաղտնի խմբակը «կազմակերպեց Հայաստանի կենսաբանական ցեղասպանութեան դաղարեցումը պահանջող գոյապահպանական ցույց-հանրահաւաք»²⁵: Դեկտեմբերի 1ին հիմնուեց «Կանչ» հասարակական-մշակութային ակումբը, որի անդամները նորահաս երիտասարդներ էին: Ակումբը 1988ի Մայիսի 22ին դէպի Սարգարապատ երթից անմիջապէս յետոյ վերաճելու էր Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, այնուհետեւ՝ Հայաստանի Ցեղապաշտական Կուսակցութեան: Նոյն ամսին, նախկին քաղբանտարկեալներ Յովիկ Վասիլեանը, Շիրակ Գիւնաշեանը, Անդրանիկ Մարգարեանը, Շողիկ Ասոյեանը եւ ուրիշներ, տարակարծութիւններ ունենալով ԱԽՄի հետ, հիմնեցին Հայ Դատի Պաշտպանութեան Ընկերութիւնը (ՀԴՊԸ), որն էլ անմիջապէս ձեռնարկեց Հայ դատ ամսագրի հրատարակութեան: Ամսագրի առաջին համարը պատրաստ էր հրատարակութեան, երբ 1988ի Փետրուարին յորդեց «արցախյան շարժում» անունով հայ ժողովրդի պատմութեան մէջ մտած համազգային շաժումը Հայաստանում:

Արցախեան ազատագրական շարժումը²⁶ նոր վերելք ապրեց վերակառուցման քաղաքականութեան հռչակումով: Արցախահայութիւնը ժողովներով, հանրագրութիւններով, նամակներով, հեռագրերով, Մոսկուա ուղարկուող պատուիրակութիւններով եւ այլ օրինական ձեւերով իր վաղեմի երազի՝ Հայաստանի հետ վերամիացման իրագործումն էր պահանջում: Քաջալերուած մոսկովեան

իշխանութիւնների մերժողական կամ խուսափողական պատասխաններից, Ադրբեջանի իշխանութիւնները օրէցօր սեղմում էին չղթան ԼՂԻՄի ու յարակից շրջանների հայութեան շուրջ: Հայրենակիցների ճակատագրով հայրենահայութիւնը չէր կարող չմտահոգուել, մանաւանդ որ Խորհրդային Հայաստանի իշխանութիւնները համարեա ամբողջական անտարբերութեամբ էին հետեւում ծաւալուող իրադարձութիւններին:

Ձանգուածային լրատուութեան միջոցների պետական մենաշնորհի պայմաններում, Հայաստանի, մասնաւորաբար Երեւանի, հասարակութեանը շարժման մեջ դնելու հիմնական միջոցներից մէկը, եթէ ոչ ամէնահիմնականը, անլեզալ մամուլն էր: ԼՂԻՄը Հայաստանի հետ վերամիաւորելու շարժման առաջամարտիկ «Միացում» ոչ-պաշտօնական կազմակերպութիւնը իգոր Մուրադեանի ղեկավարութեամբ, 1987ի վերջից սկսեց թողարկել պարբերական, համարակալուած թուցիկներ՝ հայերէն եւ ռուսերէն անշատ տարբերակներով: Մէկ-էջանոց այդ թերթիկերը կարեւոր դեր ունեցան յատկապէս մտաւորականութեանն ու ուսանողութեանը ոտքի հանելու գործում: Արցախի ձայն թուցիկը եւ նրա ռուսերէն տարբերակ *Գոյու Արցախան* (Արցախի ձայն) տեղեկութիւններ էին հաղորդում ԼՂԻՄում ու յարակից շրջաններում կատարող իրադարձութիւնների, ժողովրդական յուզումների եւ ադրբեջանական բռնութիւնների մասին:

Արցախի ձայնը չէր կարող արձագանգ չգտնել Հայաստանում: 1987ի Հոկտեմբերի 17ի երեւանեան ճնշուած ցոյցին յաջորդելու էին 1988ի Փետրուարի եւ յաջորդ ամիսների բազմա-հարիւրհազարանոց հանրահաւաքները:

Իրերի պայթիւնավտանգ այս իրավիճակում, թէ՛ Մոսկուայի, թէ՛ Երեւանի ու Բաքուի իշխանութիւնները անտեսում էին ԼՂԻՄի հայութեան պահանջները եւ շարունակում «ինտերնացիոնալիզմ» ու «Ժողովուրդների բարեկամութիւն» քարոզել: 1917ի Հոկտեմբերեան բոլշեւիկեան յեղաշրջման 70ամեակի տօնակատարութիւնների նախօրեակին լոյս տեսաւ *Կոմունիստ Ազէրբայջանա* (Ադրբեջանի կոմունիստ), *Կոմունիստ Գրուզիի* (Վրաստանի կոմունիստ) եւ հայաստանեան *Լենինեան ուղիով* կուսակցական տեսական հանդէսների միացեալ համարը՝ «Միասնական ընտանիքում» դէպի ընդհանուր նպատակը՝ նշանաբանով²⁷:

ԼՂԻՄի հայութիւնը ցանկանում էր սահմանադրական ճանապարհով գնալ դէպի ինքնորոշում: Տեղական խորհուրդների եւ կուսակցական սկզբնական կազմակերպութիւնների ժողովներում որոշումներ էին ընդունում Հայաստանին վերամիանալու մասին:

1988ի ֆետրուարի 20ին Ստեփանակերտում գումարուած *ԼՂԻՄ* Մարզային Խորհուրդը, ընդունեց պատմական որոշում՝ *ԼՂԻՄ* ը վերամիավորել *ՀԽՍՀ*ի հետ եւ այս որոշումն իրագործելու համար դիմել Խորհրդային Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի եւ Խորհրդային Միութեան Գերագոյն խորհուրդներին:

Նոյն օրը, ի պաշտպանութիւն *ԼՂԻՄ*ի հայութեան ինքնորոշման իրաւունքի, Երեւանի Օպերայի հրապարակում կայացաւ առաջին հանրահաւաքը: Կազմակերպիչներն ու ելոյթ ունեցողները հակախորհրդային որեւէ պահանջ չէին դնում ընդհակառակը, «*Լենին-կուսակցութիւն-Գորբաչով*» նշանաբանի տակ, հանրահաւաքի մասնակիցները ակնկալում էին խորհրդային ղեկավարութեան դրական պատասխանը արցախահայութեան արդարացի պահանջին:

Սակայն, հարցը այլ կերպ ընկալեցին Մոսկուայում եւ Բաքուում: Կենտրոնական հեռուստատեսութիւնն ու մամուլը, յատկապէս *ԽՄԿԿ* կենտկոմի պաշտօնաթերթ *Պրաւդան* (ճշմարտութիւն) սկսեցին խեղաթիւրման ու զրպարտանքի հեղեղ թափել, փորձելով վարկաբեկել արցախեան համաժողովրդական շարժումը: Արցախահայութեան արդար, Ադրբեջան եւ *ԽՍՀՄ* սահմանադրութիւններով ամրագրուած ինքնորոշման իրաւունքը յայտարարուեց «նաց-իոնախիստական» (ազգայնամոլական) ու «էքստրեմիստական» (ծայրայեղական): Յաւօք, մոսկովեան զանգուածային լրատուութեան միջոցներին թուեցաւ բար ձայնակցեցին հայկական պաշտօնական լրատուամիջոցները: Դա էր նրանց պարտադրում *ՀԿԿ* կենտկոմը, որի Բիւրոն, ֆետրուարի 21ի իր նիստում քննարկելով *ԽՄԿԿ* կենտկոմի «Լեռնային Ղարաբաղի իրադարձութիւնների մասին» որոշումը, իր ընդունած որոշման առաջին կէտով հրահանգում էր «քաղաքական ու գաղափարական ազդեցութեան բոլոր միջոցներն ուղղել լենինեան ազգային քաղաքականութեան, ժամանակակից էտապում նրա էութեան պարզաբանմանը»²⁸:

Խորհրդային հակահայկական քարոզչութիւնը նպաստեց հայութեան համախմբմանը: 1988ի ֆետրուարի 20ին շուրջ 5 հազարանոց հաւաքը միջանի օրուայ ընթացքում վերածուեց հարիւրհազարաւոր մարդկանց աշխարհաւաքների: Սկսուեց արցախեան համազգային շարժումը, որով թուագրում են հայոց նորագոյն պատմութիւնը: Հայաստանում արցախեան շարժումը ղեկավարեց «*Ղարաբաղ*» կոմիտէն, որի անդամները ժողովրդի համակրանքն ու աջակցութիւնը վայելող երիտասարդ մտաւորականներ էին:

Ղարաբաղի ու նրա շուրջ իրադարձութիւնների մասին խորհրդային սուտ եւ թերի տեղեկատուութիւնը կարեւոր դեր խաղաց

Ադրբեջանի Սուլթանիթ քաղաքում հայերի սպանդի սանձազերծման գործում: Այդուհանդերձ, դրանից յետոյ էլ, Հայաստանի «Արմէնպրէս» պետական լրատուական գործակալութիւնն ու պաշտօնական լրատուամիջոցները, «վերեւների» հրահանգով, շարունակեցին հայ եւ ադրբեջանցի ժողովուրդների «բարեկամութիւնը» քարոզել... «Արմէնպրէսը» նոյնպիսի տեղեկատուութիւն էր մատուցում նաեւ սփիւռքի հայութեանը՝ առաջացնելով սփիւռքահայ ուսանողների վայրույթը, որոնք «Արմէնպրէս»-ից ու Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէից շարունակ պահանջում էին իրադարձութիւնների մասին ճիշդ տեղեկութիւններ հաղորդել աշխարհի հանրութեանն ընդհանրապէս եւ սփիւռքահայութեանը մասնաւորապէս:

Արցախեան շարժման մասին առաջին լրատուութիւնը ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի պաշտօնաթերթ *Իզվեստիյի* էջերում երեւաց փետրուարի 23ին: Թերթի Երեւանի սեփական թղթակից Սերգէյ Բաբլումեանը 9 տարի անց յայտնում է, որ նրանում խմբագրութիւնը կատարել էր «մանր» սրբագրումներ. օրինակ, «Ղարաբաղում գերազացանպէս հայեր են ապրում» արտայայտութիւնը դարձել էր «ԼՂԽՍում շատ հայեր են ապրում»: Բաբլումեանն այս առթիւ հեզնում է. «Խմբագրութիւնում այնպէս էլ չմտածեցի, որ շատ հայեր են ապրում նաեւ Աւստրալիայում»²⁹:

Խորհրդային հակահայկական տեղեկատուութեան արշաւի դէմ բողոքելու համար, Մարտի 20ին շուրջ երեքհազար ցուցարարներ շարժուեցին դէպի Երեւանի Մամուլի տուն, որը շրջապատել էր ոստիկանութիւնը: Ցուցարարները «ա-մ-թ» գոռալով պատառտեցին, ոտնատակ տուեցին ու այրեցին կենտրոնական ու երեւանեան լրագիրներ:

Խորհրդային հակահայկական արշաւի դրօշակակիր Պրաւդայի գրգռիչ գործունէութեան գագաթնակէտն հանդիսացաւ յաջորդ օրուայ՝ 1988 Մարտի 21ի համարում լոյս տեսած «Յոյզեր եւ բանականութիւն» յօդուածը՝ ստորագրուած Թերթի թղթակից ոմն Գ. Օւշարենկոյի ու Բաբլում եւ Երեւանում սեփական թղթակիցներ Զ. Կատիմբեկովի եւ Եուրի Առաքելեանի կողմից: Յօդուածի դրոյթներէից գագազած ամբողջ մոսկովեան Թերթի սադրանքի հետ կապ չունեցող Եուրի Առաքելեանին մեղադրեց յօդուածի համահեղինակման մէջ ու յարձակուեց Երեւանի Մամուլի Տանը գտնուող նրա գրասենեակի վրայ: Դրանը գծուեց թուրքական մահիկը, գրուեցին անվայելուչ արտայայտութիւններ: Առաքելեանը հանդէս եկաւ Պրաւդայի ղեկավարութեանը քննադատող ու դատապարտող յայտարարութեամբ, որի համար էլ հեռացուեց աշխատանքից:

Մարտի 23-ին հետեւելու էր *Իզվեստիայի* մի այլ նոյնաբնույթ յօդ-
ւածը: Ապրիլի 3-ին *Պրաւդան* տպագրեց մի նոր յօդուած՝ «Մադ-
րիչները» պերճախօս վերնագրի տակ: Ըստ մոսկովեան թերթերի,
այդ սադրիչները Հայաստանում եւ Արցախում համաժողովրդա-
կան շարժումները ղեկավարողն «Ղարաբաղ» եւ «ԿՈՒՆԿ» կոմիտե-
ների անդամներն էին...

Խորհրդային զանգուածային լրատուութեան միջոցների հա-
կահայկական գրգռութիւնների դէմ ժողովրդական ցասումն ար-
տայայտուեց նաեւ այլ ձեւերով: Օպերայի հիմնական մուտքի վե-
րեւում յայտնուեց այժի մի մեծ գծանկար. այժը մայրում էր «Մաա՛
մուլ»: Կատակասիրութեամբ հռչակուած լենինականցիները քաղա-
քում կազմակերպեցին *Պրաւդայի*... թաղում: *Պրաւդայի* համարնե-
րով ծածկուած դադաղը հանդիսաւոր իջեցուեց գերեզման: Արա-
րողութեան ժամանակ հարց է ծագում. իսկ ինչպէ՞ս վարուել *Իզ-
վեստիայի* հետ. «Խորհրդակցելով, ժողովրդական հանրահաւաքը
որոշեց. իսկ *Իզվեստիան* դէպի՝ վերականգնացման բաժին», -
պատմում է Սերգէյ Բաբլումեանը³⁰: Կետրոնական տպագիր լրա-
տուամիջոցներով տարածուող հակահայկական կրքերին վերջ տա-
լու համար, ՀԿԿ Կենտկոմի հրատարակչութեան տպարանի անձնա-
կազմը իւրաքանչեւ հսկողութիւն սահմանեց Մոսկուայից Երեւան
փոխանցուող թերթերի բնօրինակների բովանդակութեան վրայ՝
նախքան դրանց տպագրութիւնը տպարանում, այսինքն հաստատ-
ւեց ժողովրդական գրաքննութիւն կենտրոնական ու հանրապետա-
կան թերթերի վրայ: «Տուեալ համարը լոյս կը տեսնի՞, թէ՞ ոչ՞,
կախուած էր նրանց (ՀԿԿ Կենտկոմի հրատարակչութեան տպարա-
նի աշխատողների - Գ. Ե.) վճռից», աւելացնում է Բաբլումեանը³¹:
Մոսկովեան թերթերից իր զսպուած ու յարաբերաբար հաւասար-
ակշուած տեղեկատուութեամբ առանձնացաւ միայն *Մոսկովսկիէ
նովոսթի* (Մոսկովեան լուրեր):

Հայաստանեան թերթերից իրենց սադրական բովանդակու-
թեամբ «փայլեցին» ՀԿԿ Կենտկոմի պաշտօնաթերթերը հայատառ
Սովետական Հայաստանը եւ ռուսերէն *Կոմունիստը*. հիմնականում
հետեւում էին մոսկովեան պետական-կուսակցական օրգանների
մշակած գծին, որն էլ թելադրում էր ԽՄԿԿ Կենտկոմից: Սփիւռ-
քահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Հայրենիքի
ձայն շաբաթաթերթը եւս, Կոմիտէի նախագահ, մինչ այդ իբրեւ
ՀԿԿ Կենտկոմի գաղափարախօսութեան գծով քարտուղար աշխա-
տած Կարլէն Դալլաքեանի ցուցումով, - եւ հակառակ սփիւռքահայ
ուսանողութեան բողոքներին եւ նոյնիսկ նրանց կողմից Դալլաք-
եանին ուղղուած, Արցախի հարցին շուրջ նրա տեսակէտերը դա-

տապարտող բաց նամակի հրապարակմանն ու տարածմանը,- նման ուղեգծի էր հետեւում: Մարտի 24ին, Հայրիկեանի ձերբակալութիւնից յետոյ այս թերթում Հայրիկեանի դէմ լոյս տեսաւ մի անծանօթ հեղինակի անունով ստորագրուած գրութիւն, ուր, այլազան «մեղքերի» շարքում, երկարահասակ Հայրիկեանը ներկայացւում էր որպէս կարճահասակ... իսկ թէ ի՞նչ կապ ունէր հասակը մարդի համոզմունքների հետ՝ հեղինակը այդ մասին լուծւում էր:

Այնուամենայնիւ, Հայաստանի պարբերական մամուլի ոչ-բոլոր ներկայացուցիչներն էին ջուր լցնում մոսկովեան կենտրոնի ու նրա հայաստանեան ստորադասների ջրաղացին: Արցախեան հարցի էութեան պարզաբանումով, դէպքերի ճշգրիտ ներկայացմամբ ու առհասարակ իրենց համարձակ բովանդակութեամբ շուտով աչքի ընկան Հայաստանի Լենինեան Կոմունիստական Երիտասարդական միութեան (ՀԼԿԵՄ) պաշտօնաթերթեր՝ հայերէն Աւանգարդն (գլխաւոր խմբագիր՝ Մնացական Զոհրաբեան) ու ռուսերէն Կոմսոմոլյցը (գլխ. խմբ.՝ Վարդան Գրիգորեան), ՀԼԿԵՄ ու Հայաստանի Գրողների Միութեան համատեղ հրատարակութիւն Գարուն ամսագիրը (գլխ. խմբ.՝ Մերուժան Տէր-Գուլանեան) եւ յատկապէս Երեւանի Քաղաքային Խորհրդի Գործադիր Կոմիտէի եւ ՀԿԿ Երեւանի Քաղաքային Կոմիտէի համատեղ պաշտօնաթերթ Երեկոյեան Երեւան օրաթերթը (գլխ. խմբ.՝ Կարլէն (Կամօ) Վարդանեան): Երեկոյեան Երեւանի Մարտի 18ի համարի բովանդակութիւնը երեւի այնքան դուր չէր եկել ՀԿԿ Կենտկոմի հաւատաքննիչներին, որ թերթի այդ օրուայ համարն անմիջապէս հանուեց չրջանառութիւնից եւ նոյն օրն իսկ տպուեց թերթի մէկ այլ տարբերակը՝ գրաքննութեան կատարած մկրատումներով:

Խորհրդային կենտրոնական ու խորհրդահայ մամուլի այս արշաւը ունեցաւ նաեւ իր դրական երկրորդ կողմը: Այն աւելի հրատապ ու անհրաժեշտ դարձրեց ազատ մամուլի նոր անունների ծնունդը: Վերջինիս թելադրած էր թէ՛ սեփական ժողովրդին եւ թէ՛ ԽՍՀՄ ժողովուրդներին ճշգրիտ տեղեկատուութիւն հաղորդելու անհրաժեշտութեամբ: Սրանով է բացատրւում այն փաստը, որ մինչ համազգային շարժումը ուղեկցւում էր հայերէնի դերի մեծացման ու հայկական դպրոցի պաշտպանութեան հզօր շարժումով, այդուամենայնիւ, արցախական ու անկախական շարժման ակտիւ մասնակից կազմակերպութիւնների մեծ մասը լոյս ընծայեց նաեւ ռուսերէն պարբերականներ: Ուրիշ ազդակ էր Ադրբեջանից բռնազաղթեցուած հայ, սակայն ռուսախօս փախստականներին տեղեկատուութեամբ ապահովումը: Այս կազմակերպութիւնները իրենց պարբերականներով փորձում էին մոսկովեան մամուլի տա-

րածած լուրերին ու վերլուծումներին հակադրել ճշգրիտ տեղեկատվությունն ու վերլուծումը՝ անշուշտ ծայր աստիճան անհաւասար մրցակցութեան պայմաններում: Ազատ մամուլի ռուսերէն պարբերականները հիմնականում ուղարկւում էին Ռուսաստան, Ուկրաինա, Վրաստան եւ մերձբալթեան հանրապետութիւններ, որոնց ալլախոհական-անկախական շարժումներին հետ Հայաստանի ալլախոհները երկար տարիների կապեր են ունեցել: Փոխադարձաբար, վերջիններն էլ իրենց մամուլն ուղարկւում էին Հայաստանի իրենց գաղափարակիցներին:

Արցախեան շարժման բռնկումից յետոյ լոյս տեսած առաջին պարբերականը ՀԴՊԸԻ Հայ շատ ամսագիրն էր, որի ֆետրուարի նշումը կրող անդրանիկ համարը երեւան եկաւ Մարտ ամսուայ սկզբին: Այն միջանի ամիս յետոյ սկսեց լոյս տեսնել նաեւ ռուսերէն գլոբալեռ տարբերակով՝ *Արմենակի վոպրոս* (Հայկական հարց) անունով: Օգտագործւում էր A-4 ֆորմատի թղթի միայն առաջին երեսը: Պարբերականը, յետագայ շատ պարբերականների նման, շարւում էր գրամեքենայով, բազմացւում լուսապատճէնահանման եղանակով: Կազմակերպութիւնը 1988-90ին հրատարակեց 1918-21ին Արեւելեան Հայաստանի տարածքում խորհրդային իշխանութեան դէմ կռուած, խորհրդային Միութիւնում միայն քրննադատութեան արժանացած, Վլադիմիրի (Ռուսաստան) աքսորավայրում 1955ին մահացած Գարեգին Նժդէհի Բաց նամակներ հայ մտաւորականութեան եւ ալլ գործերը:

1988 Ապրիլին լոյս տեսաւ «Ղարաբաղ» կոմիտէի ռուսերէն *Բիւլետէնը*՝ (Տեղեկագիր)՝ A-4 ֆորմատի 1-2 էջ ծաւալով, ամսական պարբերականութեամբ: Կոմիտէն Նոյեմբերին հրատարակելու էր հայերէն *Տեղեկագիր*³²: «Ղարաբաղ» կոմիտէի այս պարբերականները դադարելու էին Դեկտեմբերին՝ երկրաշարժի աղէտին յաջորդած Կոմիտէի անդամների ձերբակալութեամբ: *Բիւլետէնն* ու *Տեղեկագիրը* տեղեկութիւններ էին պարունակում հանրահաւաքների մասին: Պարբերականների հրատարակութեանը մասնակից, յետագային «Նոյեան տապան» լրատուական գործակալութեան հիմնադիր-տնօրէն Տիգրան Յարութիւնեանի բանաւոր վկայութեամբ, պարբերականները շարւում էին մի գիտահետազոտական ինստիտուտի համակարգիչներով՝ ինստիտուտի գիտաշխատող, յետագայում Աբովեան քաղաքի քաղաքապետ Գրիգոր Ոսկերչեանի կողմից: Հետեւաբար, Յարութիւնեանի վկայութեամբ, «Ղարաբաղ» կոմիտէի ռուսերէն *Բիւլետէնը* համակարգչային եղանակով շարւած առաջին պարբերականն է Հայաստանում եւ առաջիններից մին ամբողջ աշխարհի հայ պարբերական մամուլում³³: Նոյն հա-

ւաստի աղբիւրի վկայութեամբ, այս պարբերականների պատաս-
խանատուն Արա Սահակեանն էր (յետագայում՝ Հայաստանի Հան-
րապետութեան Գերագոյն խորհրդի փոխնախագահ): Հայերէն մի-
ակ համարը լոյս է տեսել դասական ուղղագրութեամբ. չարադ-
րանքը այդ ուղղագրութեանն է վերածել բանաստեղծ Վարուժան
Խաստուրը:

Ի դէպ, հետաքրքրական է այն փաստը, որ համազգային զար-
թօնքին ուղեկցում էր բանասէր Ռաֆայէլ Իշխանեանի ղեկավա-
րութեամբ մի հզօր հոսանք՝ դասական ուղղագրութեան վերա-
դառնալու պահանջով: Այս ուղղագրութիւնից շեղումը 1922ին ըն-
կալուած էր որպէս խորհրդային իշխանութեան բռնադատութիւն.
այսինքն՝ դասական ուղղագրութեան վերադարձի շարժումն ունէր
քաղաքական, հակախորհրդային բովանդակութիւն: Համազգային
շարժման առաջին տարիների շատ պարբերականներ լոյս տեսան
դասական ուղղագրութեամբ: Դա խորհրդային կարգերի դէմ բո-
ղոքի արտայայտութեան իւրայատուկ ձեւ էր: Առաջինը դասական
ուղղագրութիւնը որդեգրեց *Անկախութիւնը*՝ «Համազասպ»ի խմ-
բագրապետութեան օրով:

Ուշագրաւ է նաեւ մէկ այլ փաստ. բացի *Անկախութիւնից*, ա-
զատ մամուլի առաջին ներկայացուցիչների չափւր սովորական
թղթի չափսն էր՝ А-4 ֆորմատը: Այս փաստը նկատի ունենալով,
Տ. Յարութիւնեանը Միւսուրուած Ազգերի կազմակերպութեան Ե-
րեւանի գրասենեակի Հասարակական Տեղեկատուութեան բաժան-
մունքի 1997 Մայիսի 3ին կազմակերպած ու մամուլի ազատու-
թեան օրուան նուիրուած հանդիսութեան իր ելոյթում А-4 ֆոր-
մատը յայտարարում է «անկախության ֆորմատ»³⁴: Դրանով էլ նա
բացատրում է իր ղեկավարած գործակալութեան հրատարակած
Դը Նոյեան Տապան հայլայց անգլերէն շաբաթաթերթի չափւր А-
4 ֆորմատը ընտրելն ու այն պահպանելը՝ շեշտելու համար այդ
թերթի անկախ կարգավիճակը³⁵:

Խորհրդային հակահայկական քարոզարշաւի դէմ ինքնուրոյն
գործունէութիւն ծաւալեց Հայաստանի Ժողովրդական Տնտեսու-
թեան Պետական Ինստիտուտի *Տնտեսագէտ* բուհական (համալսա-
րանական) թերթը: Հիմնականում հայերէն այս թերթը 1988 Սեպ-
տեմբերից հրատարակել է արցախեան շարժմանը նուիրուած մի
քանի ռուսերէն, А-4 ֆորմատի 8-16 էջ ծաւալով համարներ, ո-
րոնք, ըստ թերթի գլխաւոր խմբագիր Ռաֆայէլ Երուանդեանի
բանաւոր վկայութեան, փոստով ուղարկուել են Բուլղարիա, Լե-
հաստան եւ ԽՍՀՄ այլ միութենական հանրապետութիւններ:
Տնտեսագէտը լինելու էր հայկական առաջին թերթը, որը որպէս

բողոք կոմունիստական վարչակարգի արցախեան քաղաղականութեան դէմ, 1990 Յունուարից իր ճակատից հանելու էր «Պրոլետարնե՛ր բոլոր երկիրների, միացէ՛ք» նշանաբանը³⁶:

1988ի գարնանը հասարակական ակտիւութիւնը Հայաստանում հասել էր իր գագաթնակէտին: Ստեղծուեմ էին անլեզալ նոր կազմակերպութիւններ: Սումգայիթեան ջարդից յետոյ արդէն խօսք էր գնում ինքնապաշտպանութեան նախապատրաստուելու մասին: Ապրիլի 8ին, Երեւանի Պետական Բժշկական ինստիտուտում հիմնուեց «Նարեկ» ազգային կազմակերպութիւնը, որը Հոկտեմբերից սկսեց հրատարակել *Միասնութիւն մեքենագիր*, լուսապատճենահանման եղանակով բազմացուած, չհամարակալուած ու չկազմուած էջերով պարբերականը, իսկ յաջորդ տարուայ Յունիսից՝ *Միաբանութիւն* ինքնահրատ, ռոտոպրինտով բազմացուած պարբերականը: Մայիսին լոյս տեսան երկու ամսագրեր՝ նոյնպէս ռոտոպրինտով բազմացուած՝ յուշարձանների պահպանութեան նպատակը հետապնդող «Ջանգալատուն» կազմակերպութեան համանուն պարբերականն ու ԱԽՄԻ Հայրենիք ամսագիրը³⁷: Հասարակական գիտակցութեան վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ յատկապէս Հայրենիքը, որը փորձում էր շարունակել Բոստոնում երկար տարիներ հրատարակուած, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (ՀԵԴ) համանուն ամսագրի աւանդութիւնները³⁸: Հայրենիքը 1988-89ին լոյս է տեսել 11 համար, A-5 ֆորմատի 80-150 էջ ծաւալով, 2000 տպաքանակով, ռոտոպրինտ բազմացումով, 1990 Յունուարին Երասխաւանի ինքնապաշտպանական մարտերում զոհուած եւ յետմահու Հայաստանի Ազգային Հերոսի կոչմանն արժանացած Մովսէս Գորգիսեանի խմբագրութեամբ: Ամսագրի յարաբերաբար մեծ ծաւալը թոյլ էր տալիս տպել Հայաստանի առաջին հանրապետութեան ու ՀԵԴ գործիչների եւ այլ հեղինակների գրքերից այնպիսի նիւթեր, որոնք մինչ այդ խորհրդային իշխանութիւնների կողմից եօթ փակի տակ էին գտնուում: ԱԽՄԻ պարբերականները՝ *Անկախութիւն* շաբաթաթերթն ու Հայրենիք ամսագիրը տարածուեմ-վաճառուեմ էին ԱԽՄԻ ներկայացուցիչների միջոցով, որոնց հասցէներն ու հեռախօսի համարները տպագրուեմ էին իւրաքանչիւր համարի վերջում: Անլեզալ մամուլի միւս ներկայացուցիչները եւս յետագային դիմեցին տարածման այս ձեւին, քանի որ, անլեզալ մամուլ լինելու պատճառով, նրանց վաճառքը լրագրային կրպակներում արգելուած էր:

1988 Յունիսին ԱԽՄԸ լոյս ընծայեց *Բանբեր* տասնօրեայ հանդէսը, որը տեղեկութիւններ էր հաղորդում Հայաստանում եւ ԽՍՀՄ միւս հանրապետութիւններում անկախական շարժումների

գործունէութեան մասին: Բանքերը ԱԽՄ-ի միւս պարբերականների ժողովորդականութիւնն ու հետեւողականութիւնը չունեցաւ եւ շուտով դադարեց:

Յուլիսի 18ին լոյս տեսաւ «Մաշտոց» միաւորման համանուն պարբերականի առաջին համարը: Մաշտոցի նիւթերը շեշտը դնում էին հայերէնի ու Հայաստանում հայկական դպրոցի շահերի պաշտպանութեան վրայ: Շօշափում էին նաեւ շրջակայ միջավայրի մաքրութեան, առողջ նոր սերնդի առաջացման եւ հասարակայնութիւնը յուզող այլ հարցեր: Անշուշտ, իր պատշաճ տեղն ունէր արցախեան ազատագրական պայքարը, մի թեմա, որը բացառութեամբ 1991 Սեպտեմբերին Կիրովականում հրատարակութիւնն սկսած *Քրտտոնեայ* աղւենտիստական (գալստական) թերթի, միշտ ներկայ էր ուսումնասիրուող ժամանակաշրջանի Հայաստանի ողջ պարբերական մամուլում: Մաշտոցը նշանաւորուեց նաեւ նրանով, որ պարբերականի 1989ի հինգերորդ, սեպտեմբերեան համարում հրապարակեց համանուն միաւորման փախստական առաջնորդ Ռաֆայէլ Իշխանեանի «Երրորդ ուժի բացառման օրէնքը» վերնագրուած յօդուածը, որը շատ մեծ աղմուկ բարձրացրեց Հայաստանում եւ Սփիւռքում: Յօդուածում, Իշխանեանը հայութեանը կոչ էր անում հրաժարուել աւանդական ռուսական օրինատացիայից, բարեկամանալ հարեւանների, առաջին հերթին թուրքերի հետ, չգրգռել նրանց բարկութիւնը մեր դէմ եւ ալդպիսով ապահովել հայութեան գոյատեւումը պատմական հայրենիքի այն հատուածում, որը Հայաստան պետութեան տարածքն էր կազմում: Իրականում, Իշխանեանն արտայայտում էր Հայոց Համազգային Շարժման (ՀՀՇ) վերաճած «Ղարաբաղ» կոմիտէի ղեկավարութեան տեսակէտը, որն այդ օրերին հաւասարութեան նշան էր դնում կոմունիզմի ու ռուսական օրինատացիայի միջեւ: Այս ուղղութիւնը մեծ վնաս պատճառեց հայութեանը. նման քաղաքական կողմնորոշման եւ ՀՀՇ ղեկավարութեան անհեռատեսութեան հետեւանքն եղաւ 1991ի գարնանը Արցախի Շահումեանի ենթաշրջանի եւ ԼՂԻՄ-ի տարածքի համարեա կէսի գրաւումը ադրբեջանցիների կողմից՝ խորհրդային բանակի ակտիւ մասնակցութեամբ:

1988ի Յունիսի առաջին օրերին, Շանթ Յարութիւնեանի առաջնորդութեամբ մի խումբ երիտասարդներ Օպերայի հրապարակում սկսեցին առաջին քաղաքական հացադուլը Հայաստանում: Հացադուլի օրերին, Շ. Յարութիւնեանի ղեկավարած «Կանչ» հասարակական-մշակութային ակումբը վերաճեց Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան (ՀԵԴ), որը նոյն թուականի Նոյեմբերի 30ին լոյս ընծայեց իր պաշտօնաթերթ *Ցեղակրօնի* առաջին համարը: *Ցեղա-*

Հրօնը Հայաստանի անլեզալ առաջին թերթն է, որ գաղտնի բազմացուել է տպարանում, այն էլ՝ պարբերային ժամի պայմաններում: Հասկանալի պատճառներով չի նշուել տպարանի անունը: Թերթի անդրանիկ համարի նիւթերի մեծ մասը նուիրուած է Գարեգին Նժդէհին ու նրա ցեղակրօն ուսմունքին, որին ի պատիւ էլ կոչուել է թերթը: Տպագրուել են Նժդէհի կենսագրութիւնը, նրա «Ցեղակրօնութեան հաւատածքը» եւ «Ցեղակրօնութիւնն իբր յաղթանակի զօրոյթ» գրութիւնները: Ամբողջ առաջին էջը գրաւող եւ «Հայ երիտասարդաց Դաշնակցութիւն» վերնագրուած գրութեամբ ներկայացուած է ՀՅԴի անցած ուղին, պատմութիւնը, ապա շարադրուած է կազմակերպութեան նպատակը՝ «ապահովել ներցեղային բարոյականով առաջնորդուող սերունդ, որը կ'ապահովի հայ ազգին յաղթական պայքարի տանող ուղին: ՀՅԴի ծրագիրը կազմուած է միայն մէկ կէտից, այն է՝ ՎԵՐԱԾՆԵԼ ՀԱՅ ՅԵՂԻ ՌԳԻՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ» (մեծատառով մասը թերթինն է - Գ. Ե.):

1988ի Օգոստոսին լոյս տեսաւ ՀԴԴԻ Տեղեկագրի առաջին համարը. պարբերականը աւելի շուտ ներկազմակերպական շրջաբերականի բնոյթ ունէր:

Արցախեան պահանջատիրութեան նկատմամբ Կրեմլի իշխանաւորների մերժողական կեցուածքը համաժողովրդական շարժանը մեծ թափ հաղորդեց 1988ի աշնանը: Կենտրոնական իշխանութիւնները, չբաւականանալով գրգռիչ տեղեկատուութեամբ, Սումգայիթի ջարդով, Յուլիսի 5ին Զուարթնոց օդանաւակայանում բռնարարքներով ու դրանք լուսանկարող Խաչիկ Զաքարեանի սպանութեամբ, եւլն., Սեպտեմբերի կէսերին տանկեր, զրահատեխնիկա եւ մեծաթիւ զօրք հանեցին անգէն, խաղաղ ժողովրդի դէմ: Ժողովրդի՝ իրադարձութիւնների մասին ճշգրիտ եւ օպերատիւ տեղեկատուութիւն ստանալու հիմնական, եթէ ոչ միակ, աղբիւրը հանրահաւաքներն ու նրանցում հնչող ելոյթներն էին: Զրահատեխնիկայի փողոցներում կուտակման պայմաններում, որեւէ կազմակերպուած սադրանք կարող էր աւարտուել ժողովրդի կողմից Ազատութեան հրապարակ վերանուանուած Օպերայի հրապարակում հաւաքուած տասնեակ եւ հարիւրհազարաւոր մարդկանց ջարդով: Հետեւաբար, շարժման ղեկավարները ձեւեր էին որոնում զանգուածային տարողութիւն ունեցող լրատուամիջոցներ ունենալու համար: «Ղարաբաղ» կոմիտէի ղեկավար Լեւոն Տեր Պետրոսեանը Սեպտեմբերի 14ի մի հանդիպման ժամանակ խօսեց «անկախ մամուլ ունենալու անհրաժեշտութեան մասին, որը, որոշ չափով

փոխարինելու է հրապարակային հաւաքները, որոնց աճող յաճախականութիւնը լի է վտանգներով»³⁹ :

Ազատ, ալլընտրանքային մամուլի անհրաժեշտութիւնը գիտակցում էին նաեւ անլեզալ մամուլի պատասխանատուները: Սեպտեմբերի 11ին Երեւանում կազմակերպւում է մամուլի զաղտնի ասուլիս, ուր Փարիզի *Կամք* օրաթերթի եւ օտար լրատուական գործակալութիւնների թղթակիցներին *Հայրենիքի* խմբագիր Մովսէս Գորգիսեանը «ներկայացրեց հայկական անկախ մամուլի հարցերն ու հեռանկարները»: Գորգիսեանի հետ, *Անկախութիւնի* Գէորգ Միրզոյեանը եւ *Մաշտոցի* Վահան Մկրտչեանը ասուլիսի ընթացքում քննարկում են «անհրաժեշտաբար ու հիմնականում ազգայնական» անկախ մամուլի դժուարութիւնները Հայաստանում: «Գորգիսեան անկախ մամուլը նկատում է յոյսի այն միակ յենարանը՝ հայկական մտածողութիւնը վերափոխելու համար այնպիսի մտածելակերպի, որն իսկապէս անկախ ու ազգայնական լինի եւ որը սրսկուած չլինի ազգային փիլիսոփայութեան աւանդութիւնների վրայ չհիմնուած օտար գաղափարախօսութիւններով»⁴⁰ :

Հոկտեմբերի սկզբից արդէն պարզ էր խորհրդային իշխանութիւնների մտադրութիւնը՝ ամէն գնով ճզմել ժողովրդական շարժումը: Այս իմաստով գուցէեւ ապագայ քայլերի քօղածածկույթ էր ՀիՍՀ Մինիստրների Խորհրդի կողմից «Գթութիւն» հայկական բարեգործական միութեան կանոնադրութեան հաստատումը Հոկտեմբերի 8ին: Նոյեմբերի վերջին Հայաստանում մտցուեց պարետային ժամ:

Այդուհանդերձ, ժողովրդական յուզումի ալիքը տեղատուութիւն չապրեց: Նոյեմբերին, Երեւանի Պետական Համալսարանի (ԵՊՀ) դասախօսներ Դաւիթ Յովհաննիսեանն ու Սուրէն Զոյեանը միջանի գործակիցներով հրատարակեցին *Երեւանի համալսարանի լրագիր* անլեզալ թերթը, որի 2րդ համարի հրատարակումն արգելուեց Երեւանի զինուորական պարէտի կողմից: Շրջանառութիւնից հանուեցին *Գարուն* ամսագրի 1988, No 10 եւ *Լրաբեր* հասարակական գիտությունների հանդէսի 1988, No 11 համարները:

Գործի անցաւ պաշտօնական մամուլի այն մասը, որը գիտակցել էր հաւաստի տեղեկատուութեան անհրաժեշտութիւնն ու սեփական ժողովրդի շահերը կոմկուսի ու մոսկովեան կենտրոնի շահերից վերդասումը: Աւանգարդը, *Կոմունիստ* ու *Կոմսոմոլց*ը Դեկտեմբերի 5ին հասարակական հիմունքներով լոյս ընծայեցին *Ինֆորմացիոն տեղեկագիր* երկլեզու շաբաթաթերթը, որը նպատակ էր հետապնդում անաչառ տեղեկատուութեան տարածումը:

Սակայն, հայկական պաշտօնական մամուլի այս զգուշաւոր խօսքի «ազատութիւնն» իսկ անընդունելի էր Մոսկուայի համար: ԽՍՀՄ Մինիստրների Խորհուրդը Դեկտեմբերի 3ին ընդունեց No. 1373-279, «գաղտնի» նշումը կրող որոշումը «Ադրբեջանական ԽՍՀ եւ Հայկական ԽՍՀ մամուլի եւ զանգուածային լրատուութեան միւս միջոցների նիւթերի ժամանակաւոր գրաքննութիւն մտցնելու մասին»: «Ժամանակաւոր» գրաքննութեան մասին այս որոշումով, ԽՍՀՄ Մինիստրների Խորհուրդին կից Պետական Գաղտնիքների Պահպանութեան Գլխաւոր վարչութեանը յանձնարարուեալ էր մամուլում տպագրութեան եւ եթերով հեռասփռման թոյլ չտալ «ազգամիջեան եւ այլ հիման վրայ թշնամանք եւ բռնութիւն հրահրող, ազգային բացառիկութիւն քարոզող, հասարակական կարգուկանոնի չահերին վնաս հասցնող, ինչպէս նաեւ հանրապետութիւններում իրադրութեան բնականոնացմանն ուղղուած միջոցառումներին հակադրուող» նիւթերը: Որոշման երկրորդ կէտով, երկու հանրապետութիւնների բոլոր պետական մարմիններից պահանջուեալ էր օժանդակել որոշման պահանջների իրականացմանը⁴¹:

Դեկտեմբերի 7ի ժամը 11:41ին, Հայաստանի հիւսիսային շրջաններին հարուածեց տարերային աղէտը: Երկրաշարժին զոհ գնաց շուրջ 25 հազար հոգի: Աղէտը լաւագոյն առիթ ծառայեց կենտրոնական իշխանութիւններին՝ ժողովրդական շարժումը ճշնչելու համար: Զեբրակայուեցին ու Ռուսաստանի բանտեր նետուեցին «Ղարաբաղ» կոմիտէի 11 անդամներն ու 3 ուրիշ ակտիւիստներ: Աղէտի գոտի ժամանեց ԽՍՀՄ վարչապետ Նիկոլայ Ռիժկովը, որն ընդամենը մի քանի օր առաջ էր ստորագրել «Ժամանակաւոր» գրաքննութիւն մտցնելու մասին կենտրոնական կառավարութեան որոշումը: Ռիժկովը անձնապէս համակարգում էր փրկարարական եւ վերականգնողական աշխատանքները:

Երկրաշարժի աղէտը, հազարաւոր չէնքերի հետ քանդեց բազմաթիւ տպարաններ ու խմբագրութիւններ, որոնց անձնակազմերը եւս ունեցան զոհեր: Լենինականում ամբողջովին աւերուեցին քաղաքային տպարանն ու քաղաքային Բանուոր թերթի խմբագրութիւնը. առաջինի աշխատակիցներից չորսը զոհուեց, իսկ խմբագրութեան անձնակազմը համարեա գլխովին բնաջնջուեց՝ տալով 30 զոհ: Սպիտակում հիմնովին աւերուեց շրջանային Լուսարձակ թերթի խմբագրատունը եւ զոհուեցին թերթի բոլոր աշխատակիցները. քաղաքի քանդուած տպարանում, բարբախտաբար, զոհեր չեն արձանագրուել: Ստեփանաւանի, Գուգարքի, Ամասիայի, Ղուկասեանի, Ախուրեանի, Անիի ու Արթիկի շրջաններում գրահ-

րատարակութեան ոլորտտում թէեւ զոհեր չեղան, սակայն տպարաններն ու խմբագրութիւնները յայտնուեցին վթարային վիճակում: Շատ տեղերում փճացաւ նրնաց ամբողջ ունեցուածքը: Տարբեր չափերով տուժեցին նաեւ աղէտի գօտու յարակից վեց շրջանների տպարաններ⁴²:

Գրահրատարակչութեան ու պարբերական մամուլի բնագաւառներին հասցուած վնասը վերականգնելու համար օգնութեան հասաւ Մոսկուան: ԽՍՀՄ Հրատարակութիւնների Պետական Կոմիտէն, բացի երկրաշարժից տուժածների ֆոնդին 1 միլիոն ռուբլի նուիրելուց, տրամադրութիւն է յայտնել «գործնական մեծ օգնութիւն ցոյց տալու տուժած վայրերի քաղաքային ու շրջնային տպարաններին ու գրախանութներին»⁴³: Կոմսայրի (նախկին Բանուոր) թերթի գլխաւոր Հմայեակ Ենգոյեանի վկայութեամբ, մոսկովեան Նիդելշա (չաբաթ) շաբաթաթերթի խմբագրութիւնը իրենց թերթին նուիրել է «Ժիգուլի» ՎԱԶ մականիշի մի աւտոմեքենայ⁴⁴: Հայ եւ ռուս լրագրողների օժանդակութեամբ, Լենինականի Բանուորն ու Կիրովականի Կայծը աղէտից ընդամենը մի քանի օր յետոյ վերսկսեցին հրատարակութիւնը՝ աշխատանքը շարունակելով ժամանակաւոր տնակներում⁴⁵: Մոսկովեան Մեմիա (ընտանիք) շաբաթաթերթի ու երեւանեան Աւանգարդի համատեղ ուժերով, Ինֆորմացիոն տեղեկագրի ներդիրի կարգավիճակով Դեկտեմբերի 13ից սկսեց լոյս տեսնել Յոյս երկլեզու թերթը Երեւանում: Տարեվերջին Լենինականում լոյս տեսաւ Յիշողութիւն թերթը, որը Բանուոր-Կոմսայրի յաւելուածի կարգավիճակով հրատարակուեց մինչեւ 1994ի Յունուարը: Եկուոր շինարար-վերականգնողների համար յաջորդ տարի լոյս էին տեսնելու Լենինականում՝ Ռաբոչի (բանուոր) (Բանուորի յաւելուածի կարգավիճակով, Հոկտեմբերի 10ից), Նա ստրոյկախ Լենինականա (Լենինականի շինարարութիւններում)⁴⁶, Կիրովականում՝ Դրուժբա (բարեկամութիւն) (Կայծի յաւելուածի կարգավիճակով, Յունուարի 16ից)⁴⁷ եւ Ուկրաինայի ստորիտէլ (ուկրաինացի շինարար) (Նոյեմբերի 7ից) ռուսերէն թերթերը, Ախուրեանի շրջանի Շիրակ թերթում՝ շաբաթական մէկ էջ, Գուգարքի շրջանի համանուն թերթի շաբաթական երեք համարներում՝ նիւթեր ռուսերէն լեզուով⁴⁸:

Խորհրդային կառավարութեան 1988 Դեկտեմբերի 3ի գաղտնի որոշման պահանջները հաշկական պաշտօնական մամուլում այնքան էլ չէին իրագործուում, հակառակ գրաքննութեան անսախաղէպ խստացման: Ահաւոր երկրաշարժից ընդամենը կէս ամիս յետոյ, ՀԿԿ Կենտկոմի Բիւրոն Դեկտեմբերի 23ի իր նիստում երկար քննարկում է «հանրապետութեան զանգուածային պրոպա-

զանդայի եւ տեղեկատուութեան միջոցներով ազգամիջեան յարաբերութիւնների հարցերի լուսաբանման գործում լուրջ թերութիւնների» հարցը: Խստորէն քննադատուեմ են այս միջոցների «առանձին ղեկավարներ», որոնք չեն հասկանում այն «ծայր աստիճան վտանգաւոր սահմանագիծը, որին հասել է հանրապետութիւնը»: Բիւրոն դժգոհութիւն է յայտնում, որ կուսակցական եւ պետական պաշտօնաթերթերով եւ եթերով կուսակցական, պետական եւ մտաւորական գործիչների ելոյթները խիստ անբաւարար քանակի են: «Ջանգուածային լրատուութեան միջոցների միջանի ղեկավարներ զգացմունքների եւ կրքերի գերին են դարձել», - կշտամբում է Հայաստանի կոմունիստական ղեկավարութիւնը: Այնուհետեւ թուարկում են այդ «միջանի» ղեկավարներից ոմանց «անպատասխանատու» ելոյթները: Առաջինը խստորէն քննադատուեմ է Ռզնի երգիծաթերթի գլխաւոր խմբագիր Արամայիս Սահակեանը: Թերթի «արտադրութիւնից հանուած», 1988ի 22րդ համարի առաջին էջում, «Կսմիթներ Թատերական հրապարակից» ընդհանուր վերնագրի տակ վերարտադրուել են հրապարակում տեղադրուած անանուն հեղինակների գործեր, «որոնցում խեղաթիւրուած ձեւով են ներկայացւում դեմոկրատականացման գործընթացի, զանգուածային լրատուութեան միջոցների գործունէութեան մի շարք կողմեր: Բացատրական տեքստում, խմբագրութիւնը գովաբանում է այդ կասկածելի «ատեղծագործութիւնների» հեղինակներին: Հանդէսի վերջին էջում տեղադրուած է մի խաչբառ, որը խորհրդանշում է բուրժուական Հայաստանի եռագոյն դրօշը եւ սադրիչ հարցումներ է բովանդակում»⁴⁹: Քննադատուեմ է Սոլեւտկան դպրոց թերթը, որի «մեղքն» այն է եղել, որ Դեկտեմբերի 1ի համարում թողարկել է «Արցախի ձայն» նպատակային էջ, ուր տպագրել է Ստեփանակերտից Տրդ դասարանի մի աշակերտի ելոյթը, ուր նա օրինաչափ եւ անհրաժեշտ է գտնում աշակերտների մասնակցութիւնը ցուցերին ու հաւաքներին⁵⁰: «Համանման սխալ» է թույլ տուել Պիոնէր կանչ թերթը Դեկտեմբերի 2ի համարի «Քեզ հետ եւ առանց քեզ, կամ բաց խօսակցութիւն ռուսական դպրոցներից հայկական տեղափոխուած երեխանների հետ» յօդուածում, «ուր մայրենի լեզուի դրական, առողջ պրոպագանդան կատարուեմ է լեզուների հակադրումով»⁵¹: Բառացիօրէն արտագրելով ԽՍՀՄ Մինիստրների Խորհրդի Դեկտեմբերի 3ի որոշման նախաբանը եւ յայտնելով ժամանակաւոր գրաքննութիւն հաստատող այդ որոշման մասին, ՀԿԿ Կենտրոնի Բիւրոն ընդունում է 9 կէտերից բաղկացած մի որոշում. առաջին կէտով զգուշացւում են մամուլի օրգանների, «Արմէնպրէսի» եւ Հեռուստա-

տեսութեան եւ Ռադիոյի Պետական Կոմիտէի ղեկավարները, որ նրանք «անձնական պատասխանատուութիւն են կրում հրապարակուող նիւթերի գաղափարա-քաղաքական բովանդակութեան համար», իսկ սխալների կրկնութեան դէպքում նրանց դէմ կը կիրառուեն «պատժի ամէնախիստ միջոցներ, ընդհուպ մինչեւ զբաղեցրած պաշտօններից ազատումը»⁵³ : Խիստ նկատողութիւն է յայտարարուած Արամայիս Սահակեանին. նա զգուշացուած է, որ «եթէ նա համապատասխան եզրակացութիւններ չանի, ապա նա աւելի խիստ պատասխանատուութեան է ենթարկուելու»⁵³ : Երեւանի եւ Սիսիանի քաղկոմներին յանձնարարուած է կուսակցական պատասխանատուութեան կանչել ԽՄԿԿ անդամներ՝ Հեռուստառադիոպետ-կոմի նախագահի տեղակալ Պերճ Ստեփանեանին, Մոլեռական Ղարոյց թերթի խմբագիր Լիւդուիգ Կարապետեանին եւ Սիսիանի Ռոտտան շրջանային թերթի խմբագիր Կոլի Գէորգեանին՝ թերթի Նոյեմբերի 19ի համարում տպուած «Յանցագործութիւն եւ անպատժելիութիւն» յօդուածի հրապարակման համար⁵⁴ : Քաղկոմներին եւ շրջկոմներին հրահանգուած է՝ քննարկել իրենց իրաւասութեան տակ գտնուող թերթերում պետական եւ կուսակցական կարեւոր փաստաթղթերը չհրապարակելու փաստերը, զանգուածային լրատուամիջոցների ղեկավարներին յանձնարարուած է՝ «կոնկրետ միջոցառումներ ձեռք առնել նիւթերի գաղափարա-քաղաքական մակարդակը բարձրացնելու ուղղութեամբ», մէկչաբաթեայ ժամկէտում Կենտկոմ ներկայացնելու կուսակցութեան պահանջներին բաւարարող հրապարակումների եռամսեակային պլանը, եւ ընդհանուր առմամբ ճշգրտել, Հայաստանի Գլխավորին յանձնարարուած է ուժեղացնել գրաքննութիւնն ու «բացառել... գաղափարապէս տհաս, քաղաքականապէս վնասակար նիւթերի» հրապարակման հնարաւորութիւնն իսկ⁵⁵ :

1988ի հրատարակութիւններ են նաեւ ԵՊՀ Ժուռնալիստիկայի բաժանմունքի Ժուռնալիստ ուսումնական թերթը (առաջին համարը՝ Յունուարին), «Իմպուլս» արտադրական միաւորման համանուն գործարանային բազմատպաքանակ թերթը (Յունուարի 20ից), ԵՊՀ Բանասիրութեան ֆակուլտետի Աստղիկ թարգմանական հանդէսը (Փետրուարին), ՀԽՍՀ Աշխատանքի եւ Սոցիալական Հարցերի Պետական Կոմիտէի Տեղեկագիրը՝ հայերէն եւ ռուսերէն անշատ տարբերակներով, ինչպէս նաեւ «Խորան» մշակութային ակումբի համանուն ինքնահրատ հանդէսը՝ Ռուբէն Յակոբեանի խմբագրութեամբ։ Այս պարբերականները հասարակական կարծիքի վրայ զգալի որեւէ ազդեցութիւն չեն ունեցել :

Աւարտուեց 1988-ը մի տարի, որը շրջադարձային եղաւ ո՛չ միայն Հայաստանի, Արցախի, այլեւ առհասարակ հայոց պատմութեան մէջ: 200 երեւանցիների հետ 1996 Մայիսին անցկացուած մի հարցախոյզից սոցիոլոգ Մարինէ Քիւրքչեանը յանգել է այն եզրակացութեան, որ «հասարակական գիտակցութեան մէջ զանգ-լածային լրատուական միջոցների ազատականացման շրջադարձային տարի է դրոշուած 1988 թուականը»⁵⁶:

Իշխանութիւնների բռնութիւններն ու երկրաշարժի աղէտը, սակայն, չմարեցին ժողովրդական շարժումը: Այն զրկուել էր իր դեկավարներից, բայց շարժումը ծնելու էր նրանց փոխարինողներին: Պայքարը շարունակուեւ էր:

Խորհրդային վերջին տարիների ինքնահրատ⁵⁷ պարբերական մամուլի մասնագէտ Ալեքսանդր Սուեւոնովը յայտնում է, որ 1989 թուականը ինքնահրատ մամուլի աննախընթաց պայթիւնի տարի եղաւ Խորհրդային Միութիւնում: Ըստ նրա ոչ-վերջնական վիճակագրութեան, տարուայ միայն առաջին տասնամիսներին ամբողջ երկրում լոյս են տեսել 750-800 անուն ինքնահրատ նոր պարբերականներ, որոնց «աւելի քան կէսը հասարակական-քաղաքական ուղղուածութեան հանդէսներ են»⁵⁸: Հայաստանի համար, մեր հաշ-ւարկներով, այդ տոկոսը մօտ է 90% է: Եւ դա լիովին հասկանալի է: Չէ՞ որ Հայաստանում միանգամից մղուեւ էր քաղաքական պայ-քար երկու ուղղութեամբ՝ ինքնորոշում (կամ անկախութիւն) եւ Արցախի վերամիաւորում Հայաստանին:

Երկրաշարժից յետոյ հալածանքները ուժեղացան նաեւ ազատ մամուլի նկատմամբ, որը իր գոյութիւնը շարունակում էր ծան-րագոյն պայմաններում: Հայաստանի քաղաքական վերնախաւը կարծես թէ չէր ուզում լսել անգամ կիսազատ խօսք: 1992ի Դեկ-տեմբերից հրատարակուող *Ժամանց* եւ *գործ* թերթի խմբագիր Արա Չալիկեանը մեզ բանաւոր յայտնեց, որ ինք ու ՀԼԿԵՄ Կենտ-կոմի կից Ընտանիքի եւ Ամուսնութեան Կենտրոնի իր գործընկեր-ները 1989ի սկզբին մտադրութիւն են ունեցել հրատարակել մի թերթ, որի նպատակն էր ծանօթութիւններ հաստատել աղջիկների ու տղաների միջեւ՝ ամուսնութեան հեռանկարով: Նրանց ծրագի-րը խստօրէն մերժուել է ՀԼԿԵՄ ղեկավարութեան կողմից:

Սակայն, անհնար էր ազատ մամուլի թափանիւր կանգնեցնել: Փետրուարին լոյս տեսաւ ԱԽՄի *Ինքնորոշում* անկանոն պարբերա-կանութեամբ շաբաթաթերթի առաջին համարը, որը կրում է 1988 Դեկտեմբերի 1ի թուականը: Թերթի կարգախօսն էր «Ինքնո-րոշման ճանապարհով դէպի անկախութիւն»:

Պաշտօնական պարբերականների մի մասը սկսեց կերպարանափոխուել: «Սովետական» բառից հրաժարուեցին եւ նոր անուն ընտրեցին Սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի Սովետական Հայաստան (1989 No. 1ից՝ Վերածնունդ Հայաստան) եւ Հայաստանի Գորղների Միութեան Սովետական գրականութիւն (1989 No. 1/2ից՝ Նորք) ամսական հանդէսները: Առաջինի հրատարակութիւնն ու երկրորդի անուանափոխութիւնը թոյլատրել է ՀԿԿ Կենտկոմի Բիւրոն՝ համապատասխանաբար 1988ի Ապրիլի 8ին եւ 1989ի Ապրիլի 29ին⁵⁹: Իր հանդէսի անուանափոխումը ՀԳՄը «հիմնաւորում» էր «Հայաստանում խորհրդային իշխանութեան հաստատումից յետոյ հրատարակուած գրական, հասարակական եւ գիտական տարեգրքի անունը վերականգնելու» պատճառաբանութեամբ: Բիւրոյի որոշումով, 1989 Յունուարից հրատարակուելիք նոր ամսագիրը՝ Վերածնունդ Հայաստանը դառնում էր այս կոմիտէի եւ Արտասահմանեան Երկրների հետ Մշակութային Կապերի եւ Բարեկամութեան Հայկական Ընկերութեան (Ծանօթ՝ ռուսերէն ԱՕԿՍ կրճատուած անունով) համատեղ հրատարակութիւնը, հայերէնի զուգահեռ լոյս տեսնելով հինգ անշատ տարբերակներով՝ ռուսերէն, անգլերէն, ֆրանսերէն, գերմաներէն եւ իսպաներէն, հայերէնի կէս ծաւալի չափով: Բիւրոն միաժամանակ որոշեց դադրեցնել Սովետական Հայաստան ամսագրի, նրա օտարալեզու յաւելուած Կռունկի եւ ԱՕԿՍի օտարալեզու Արմենիա սեկտորի (Հայաստանն այսօր) ամսագրերի հրատարակութիւնը⁶⁰: Մինչեւ 1989ի սկիզբը Կռունկն ու Արմենիա սեկտորի ամսագրերը լոյս են տեսել վերոնշեալ հինգ օտար լեզուներով:

Գարնանը ժողովրդի ակտիւութիւնը մեծացաւ: Մոսկուայում սկսեցին երեւալ Գորբաչովի դիրքերը: ԽՍՀՄ պատմութեան մէջ առաջին անգամ, ԽՍՀՄ Գերագոյն Խորհրդի պատգամաւորական ազատ ընտրութիւններ անցկացուեցին, որոնք իշխանութեան բերեցին առաւել արմատական տրամադրուած բարեկարգիչների եւ ժողովրդականների:

Հայաստանի արցախեան շարժման համար հիմնական խնդիր էր շարժման ղեկավարների ազատ արձակումը: Այս նպատակով, շարժման երկրորդ էջելոնի գործիչները Մարտի 10ին հիմնեցին «14ի պաշտպանութեան հասարակական խորհուրդ»ը, որի լիազօր ընտրուեց Լիւդուիգ Խաչատրեանը: Խորհուրդը միջանի օր անց հրապարակեց իր հայերէն եւ ռուսերէն Տեղեկագրերի առաջին համարները: Պարբերականները լոյս են տեսել ամսական պարբերականութեամբ, հայերէնից հրապարակուելէ չորս, իսկ ռուսերէնից՝ երկու համար:

Մարտի 11ին, ԵՊՀ ուսանողներ Նախիրի Յունանեանը, Վարդան Բախչեանը⁶¹, Տիգրան Նաղդալեանը, Սուրեն Աբրահամեանը եւ ուրիշներ հրապարակեցին 1988 Սեպտեմբեր-Հոկտեմբերին հիմնուած Հայ Ուսանողութեան Դաշինք (ՀՈՒԴ) անլեզալ կազմակերպութեան Դաշինք ինքնահրատ պարբերականի առաջին համարը: Դաշինքը յատկանշուած էր իշխանութիւնների խստագոյն քննադատութեամբ: A-5 ֆորմատի 8 էջ ծաւալով այս ուսանողական անլեզալ առաջին պարբերականը խմբագրել է Նախիրի Յունանեանը: «Իմ անունս Պալքար է եւ վախճանս՝ Յաղթանակ» արտայայտութիւնն էր Դաշինքի նշանաբանը: Խմբագիրն ու ՀՈՒԴի անդամ 15 այլ անձինք ձերբակալուեցին Մարտի 26ին: ԵՊՀ ուսանողները նրանց ազատ արձակման համար դիմեցին բողոքի դասադուլի: Ձերբակալութիւնը արգելք չհանդիսացաւ, որ լոյս չտեսնի Դաշինքի Մարտի 11 թուականի նշումը կրող 2րդ համարը: 10 օր արգելափակելուց յետոյ, իշխանութիւնները ազատ արձակեցին ուսանողներին: Դաշինքի վերջին՝ 3րդ համարը լոյս տեսաւ Ապրիլի 25ին:

1989ի գարնանը լոյս տեսաւ Լէոյի անուն No. 65 դպրոցի Միացում թերթը, առանց թուի ու թուականի նշումի, «անլեզալ թերթ» խիստ բնորոշ ենթավերնագրով: Միացումը դպրոցական ինքնահրատ մամուլի առաջին ներկայացուցիչն է: Թերթի անունն իսկ յուշում էր, որ Արցախի հարցը հրատարակիչներին առաւել յուզում է, քան դպրոցի ու կրթութեան հարցերը: Միացումը յատկանշուած է խոր քաղաքական ուղղութեամբ⁶² ու վարչակարգի ծայրայեղ քննադատութեամբ: Խմբագիր՝ Արամ Բաբաջանեան: Միացումը յայտնում էր, որ Արցախում տարածուած է անվճար, իսկ թերթի իրացումից ստացուած գումարի 80%ը փոխանցուելու է «Գթութիւն» հայկական բարեգործական ընկերութեան ֆոնդին, որը հիմնել էր արցախեան չարժման ակտիւիստներից Խաչիկ Ստամբուլցեանը:

Իշխանութիւնների ճնշմանը հակադարձելու համար, ՀՀՇԻ երկրորդ էջերնի գործիչները նախապատրաստում են ՀՀՇ հիմնադիր համագումար անցկացնել: Համագումարի նախապատրաստումը, ժողովրդական չարժման՝ հանրահաւաքների արգելման պայմաններում ուղղորդումն ու այլ հանգամանքներ անհրաժեշտ էին դարձնում սեփական, մեծաթիւ տպաքանակով մամուլը: Ապրիլի 10ին լոյս տեսաւ ՀՀՇԻ *Խօսնակ* չաբաթաթերթի առաջին համարը՝ 3000 տպաքանակով. խմբագրակազմ՝ Երջանիկ Աբգարեան (խմբագիր), Ալեքսանդր Արզումանեան եւ Դաւիթ Շահնազարեան: Զորս, իրարից անջատ էջեր, որոնց միայն մէկ կողմն է

օգտագործուած, շարուածքը՝ համակարգչային, բազմացումը՝ ռո-
տոպրինտով:

Առաջին համարի «Միրելի ընթերցող» վերնագրուած խմբագ-
րականում ասուած է.

«Քո աչքի առջեւ, քո ներկայութեամբ եւ քո մասնակցու-
թեամբ տեղի են ունենում կարեւորագոյն իրադարձութիւններ...
Բայց եւ քո աչքի առջեւ եւ քո ներկայութեամբ էլ, որ պաշտօնա-
կան շրջաններն ու նրանց մամուլը ամէն օր ու ամէն ժամ ջանա-
ցին խեղաթիւրել, կեղծել, նենգափոխել մեր ազգային-ժողովրդա-
վարական շարժման բնոյթն ու նպատակները...»:

Խմբագրականը այնուհետեւ աւելացնում էր. «... Հասկանալով,
որ ներկայիս իրականութեան մէջ բացարձակ քաղց է տիրում եւ
ի կատարումն ժողովրդի ներկայացուցիչների պահանջի հիմնուած
է ՀՀՇԻ Խօսնակ շաբաթաթերթը: Խօսնակը իր էջերը կը տրա-
մադրի հաւաստի լուրերին, կը հրապարակի փաստաթղթեր, մեկ-
նաբանութիւններ եւ այլ կարգի նիւթեր»: Այնուհետեւ ներողու-
թիւն է խնդրում տեխնիկական հնարաւոր թերիւնների համար եւ
խոստում տրւում, որ թերթում «տեղ կը տրուի բազմազան կար-
ծիքներին»:

Խօսնակից հրապարակուել է ընդամէնը 4 համար: Երկրորդ եւ
երրորդ համարներն ունեն կրկնակի ծաւալ (1 տպագրական մա-
մուլ): Ապրիլի 17ի երկրորդ համարում լայն տեղ է յատկացուած
Թբիլիսիի Ապրիլի 9ի ջարդի լուրերին. ՀՀՇն իր վշտակցու-
թիւնն ու նեցուկն էր յայտնում Խորհրդային Միութիւնից անկա-
խանալ ձգտող վրացի զաղափարակիցներին: Համարի լրատուու-
թիւնն ընդգրկում է ամբողջ ԽՍՀՄ-ը, Արեւելեան Եւրոպան, մին-
չեւ իսկ... Աֆրիկեան նորանկախ Նամիբիան, որի «ինքնորոշուած
ժողովրդին... ի սրտէ շնորհաւորում ենք»: Հասկանալի է ազատա-
տենչ հայութեան այս շնորհաւորանքը, որն ամէնայն հաւանակա-
նութեամբ չհասաւ Նամիբիացիներին: Համարում մեծ տեղ են
զբաղեցնում ՀՀՇ որոշումներն ու զանազան փաստաթղթերը:

ԱԽՄի մէջ անկախութեան հասնելու մարտավարական երկու
ընտրանքների շուրջ տարակարծութիւններն ի վերջոյ յանգեցին
կազմակերպութեան պառակտմանը: 1989 Ապրիլի 24ին, ԱԽՄի
անդամներ Ռաֆայէլ Համբարձումեանը, Գրիգոր Մխիթարեանը,
Դալտոն (Արցախ) Բունիաթեանը երկու համախոհների հետ հիմ-
նեցին Ազգային Միասնութեան Ուխտ (ԱՄ ՈՒ) կազմակերպու-
թիւնը, որն ուղիղ մէկ ամիս անց հրապարակեց իր Ազատ Հայք
ինքնահրատ շաբաթաթերթի առաջին համարը: ԱՄ ՈՒի ղեկավա-
րութիւնը 1989 Յուլիսի 13ին դիմում է յղում ՀԽՍՀ ԳԽ նախա-

գահութեանը՝ խնդրելով թույլատրել Ազատ Հայքի տպարանային բազմացումն ու ազատ տարածումը⁶³, սակայն դիմումը ապարդիւն է մնում: Ազատ Հայքը կարեւոր ներդրում ունեցաւ անկախական գաղափարների տարածման մէջ: Թերթի նշանաբաններ էին՝ «Եղիցի Միացեալ, Ազատ ու Անկախ Հայք» եւ «Հայ դատը շահելու առաջին քայլը իմ. Հայաստանի անկախացումն է»: ԱՄՈԻՆ հիմնեց «Ազատ Հայք» հրատարակչութիւնը, որն առանձին գրքոյկով, հազարաւոր օրինակներով հրատարակեց Ռափայէլ Պատկանեանի «Վարդապետարան Հայաստանի ազատութեան»ը, ինչպէս նաեւ 1990ի սկզբին պատճէնահանման եղանակով բազմացրեց ու տարածեց ՀՅԴ Բիւրոյի, Աթէնքում լոյս տեսնող *Դրօշակ* տեսական շաբաթաթերթի 6-7 համար, անհատ հովանաւորների տրամադրած գումարներով: *Դրօշակի* վերահրատարակութեան նպատակով այդ օրերի համար մի մեծ գումար (1000 ռուբլի) է նուիրել Սերժ (Արամ) Սարգսեանը⁶⁴: «Ազատ Հայք» հրատարակչութիւնը 1990ին հրատարակեց Համբարձումեանի 1979-80ին գրած «Թուղթ ընդհանրական» եւ 1987 Մայիս-Օգոստոսին գրած «Յորդորակ» պատմա-քաղաքական հրապարակախօսական գրքոյկները՝ միացեալ հատորով:

Աբողջ ԽՍՀՄ-ում ծայր առած ժողովրդական հօգի շարժման ալիքի ճնշման տակ իշխանութիւնները աստիճանաբար տեղի էին տալիս: Յանուն հայոց լեզուի անաղարտութեան եւ հայախօսութեան շարժման մարտնչողները առաջին յաղթանակը արձանագրեցին, երբ «սովետ» բառը 1989 Մայիսին փոխարինուեց հայացուած «խորհուրդ» բառով: Համապատասխան փոփոխութեան ենթարկուեցին այդ բաղադրիչն ունեցող մամուլի օրգանների աւուները եւ ենթավերնագրերը:

Հայրենական, սփիւռքեան եւ միջազգային հօգի ճնշման դիմաց, իշխանութիւնները Մայիսի 31ին մոսկովեան բանտից ազատ արձակեցին արցախեան շարժման 14 ղեկավարներին: Նրանք նոյն օրը վերադարձան Երեւան: Հարիւրհազարաւորներ հերոսներին վայել ընդունելութեամբ դիմաւորեցին շարժման առաջնորդներին: Յունիսի 25ին, ժողովրդական ճնշման տակ, ՀԽՍՀ Գերագոյն Խորհուրդը յատուկ որոշումով ճանաչեց ՀՀՇՆ որպէս հասարակական կազմակերպութիւն: Այսպիսով, Հայաստանի կոմունիստական վարչակարգը իրաւականօրէն ճանաչեց ՀՀՇի գոյութիւնը: Այս երկու իշխանութիւնների միջեւ պայքարը Հայաստանում փողոցներից ու հրապարակներից տեղափոխուեց դահլիճներ ու սրահներ, թէեւ երբեմն շարունակուեմ էին ՀՀՇի հանրահաւաքները: ՀՀՇի դէմ ուղղակի ճնշումներին վերջ տրուեցին:

Հասկանալի է, որ Հայաստանում երկիրչխանութեան երկու բե-
ւեռները՝ Կոմունիստական Կուսակցութիւնն ու Հայոց Համագգա-
յին Շարժումը այսուհետեւ մեծ նշանակութիւն էին տալու զանգ-
ւածային լրատուութեան միջոցներով քարոզչութեանը: Հիկ Կենտ-
կոմի Բիւրոն իր 1989 Յունիսի 21ի նիստում հաստատեց Հիկ
Կենտկոմի լրատուական կենտրոն ստեղծելու Կենտրոնի գաղափա-
րախօսական բաժնի առաջարկութիւնը: Այս կառույցի հիմնումը
նպատակ էր հետապնդում «հանրապետութեան զանգուածային
լրատուութեան միջոցների աշխատողներին, ժուռնալիստական
համայն հասարակայնութեանը Հիկ ԿԿ Բիւրոյի, քարտուղարու-
թեան, յանձնաժողովների, բաժինների գործունէութեան մասին ա-
ռաւել լայն ու սիստեմատիկ տեղեկատուութիւն» հաղորդել⁶⁵:

«Ղարաբաղ» կոմիտէի անդամների Հայաստան վերադարձով ու
ՀՀՇԻ գրանցումով, մեծ թափ ստացաւ անկախական գաղափարնե-
րի քարոզչութիւնը: «Ղարաբաղ» կոմիտէն, որը մինչեւ իր ձեռքա-
կալութիւնը ժխտում էր իշխանութեան հասնելու որեւէ նպատակի
առկայութիւնը իր մօտ, աստիճանաբար բացայայտեց իշխանու-
թիւնը նուաճելու եւ Հայաստանը անկախութեան առաջնորդելու
իր նպատակը:

Ժողովրդական շարժումը նոր թափ ստացաւ: Մեծ ակտիւու-
թիւն ցուցաբերեց յատկապէս երիտասարդութիւնը: Դրա ապա-
ցոյցներից է նաեւ երիտասարդական նոր պարբերականների երե-
ւումը: Յունիսին, ՀԵԴՆ հրապարակեց *Ելանք ի բողոք* պարբերա-
կանի առաջին եւ միակ համարը: Յուլիսին լոյս տեսաւ «Նարեկ»
ազգային կազմակերպութեան *Միաբանութիւն* պարբերականի ա-
ռաջին համարը: Յուլիսի 3ին, մի խումբ ուսանողներ ու երիտա-
սարդներ հիմնեցին Հայ Ազգային Երիտասարդական Միութիւնը
(ՀԱԵՄ): Միութիւնը աշնանը լոյս ընծայեց իր պաշտօնաթերթ *Ա-
զատութեան աւետարների* առաջին համարը, ուր տպագրուած է
ՀԱԵՄի «Հռչակագիրը»: Այնտեղ նշուած է ՀԱԵՄի նպատակը՝
«համախմբել ազատութեան համար պայքարող հայ պետականու-
թեանն ու հայ երիտասարդութեանը»: Հռչակագիրը շարունակում
է. «ՀԱԵՄը հաւատացած է, որ իւրաքանչիւր ազգի գոյատեւման
ու բարգաւաճման, բնականոն կեանքի զարգացման ամէնամանհրա-
ժեշտ նախապայմանը ազգային ազատ պետականութիւնն է:
ՀԱԵՄը հաւատացած է, որ Հայկական հարցի (Հայ դատի) լուծման
բանալին իմ. Հայաստանի անկախացումն է»: ՀԱԵՄը ցանկութիւն է
յայտնում «գործակցել եւ մերձենալ սփիւռքահայ երիտասարդա-
կան կազմակերպութիւնների հետ, ստանալ նրանց օժանդակութիւ-

նը»: Հռչակագիրն աւարտուում է «Կեցցէ՛ ազատ, անկախ եւ միացեալ Հայաստանը», մեծատառով տպուած կարգախօսով:

ՀԱՅՄԻ պաշտօնաթերթը կոչուել է 1883ին Մոսկուայի հայ ուսանողների հիմնած «Հայրենասէրների միութեան» հրատարակած, «հայ իրականութեան մէջ առաջին յեղափոխական լրագրի» անունով⁶⁶, դրանով իսկ «վերականգնելով թերթի հրատարակութիւնը նրա «վախճանից» 100 տարի անց... Կը փորձենք շարունակել նրա գաղափարա-քաղաքական աւանդութիւնը, թարմացնելով այն այսօրուայ ազգային ազատագրական պայքարի բոցաշունչ ոգով, նոր վերլուծութիւններով ու մտքերով»⁶⁷: ՀԱՅՄՆ ու Ազատութեան աւետարները յարել են ԱԻՄ ին: Թերթը խմբագրել է ՅՊՀ Արեւելագիտութեան ֆակուլտետի ուսանող Սամուել Մարկոսեանը: Լոյս է տեսել ընդամէնը երեք համար, սակայն զգալի ներդրում է ունեցել երիտասարդութեան հայրենասիրական դաստիարակութեան գործում: Միութեան առաջին տարեդարձի օրը՝ 1990 Յուլիսի 3ին, ՀԱՅՄԻ Հասարակական Հարցերի Ծառայութիւնը լոյս ընծայեց *Ձայն բազմաց* թերթիկը, 6 էջ ծաւալով: Լոյս է տեսել միայն մէկ անգամ: *Ձայն բազմացի* «Ծննդեան վկայական» անստորագիր խմբագրականը յայտնում է, որ անկախ Հայաստանի ստեղծման գործին նուիրուած երիտասարդներ պատրաստելուց բացի, ՀԱՅՄԻ նպատակներից են նաեւ «Հայ երիտասարդներին մօտեցնել իր[ենց], ազգային արմատներին, հեռու պահել նրանց այլակրօնութեան եւ ազգուրացութեան ճանապարհից, պահպանել լեզուի եւ արեան մաքրութիւնը, բարձրացնել Հայ Առաքելական եկեղեցու դերը...»:

Բացի այս երկու պարբերականներից, ՀԱՅՄը հրատարակել է նաեւ «Դէմքեր եւ մտածումներ» մատենաշարը, Նժդեհի էջեր իմ օրագրէն աշխատութիւնը:

ՀԱՅՄԻ ծննդից մի քանի օր յետոյ՝ Յուլիսի 9ին կայացած հիմնադիր համագումարով ծնունդ անկախական ուղղուածութեան եւս մէկ, առաւել ուժեղ մի կազմակերպութիւն՝ Հայաստանի Ազգային Անկախութեան Կուսակցութիւնը (ՀԱԱԿ): Երեք օր յետոյ՝ Յուլիսի 12ին, լոյս տեսաւ ՀԱԱԿի Հայաստան պաշտօնաթերթի առաջին համարը: ՀԱԱԿը բացայայտօրէն յարում էր ՀՅԴին, որը դեռեւս արգելուած կուսակցութիւն էր Խորհրդային Հայաստանում: Հայաստանի էջերում արտատպուած էին Հայաստանի առաջին հանրապետութեան, ՀՅԴ գործիչների գրութիւնները, դաշնակցական մամուլի նիւթերը: Թերթն ունէր երկու նշանաբան՝ «Ով հայ ժողովուրդ, քո միակ փրկութիւնը քո հաւաքական ուժի մէջ է» եւ «Մեր նպատակն է վերականգնել ազգային անկախ պե-

տականութիւնը»: ՀԱԱԿԻ գործիչների մի մասը եւս նախկին ԱԽՄականներ էին:

Յուլիսին ՀՀՇՆ լոյս ընծայեց միանգամից երեք պարբերական՝ *Լրատուական թերթիկը*, նրա ռուսերէն կրկնօրինակ *Ինֆորմացիոնի լիստոկը* եւ *Ոսանակին* փոխարինած *Տեղեկագիրը*: Նրանցից առաւել երկար կեանք ունեցաւ առաջինը, որը շարունակուեց մինչեւ 1990 Յունուարը: Սակայն, այս երեք պարբերականները հասարակական կամ կազմակերպչական լիշարժան դեր չունեցան: Դրանց հրատարակութիւնը աւելի շուտ պայմանաւորուած էր ՀիՍՃ ԳԽ Օգոստոսի 27ի մասնակի ընտրութիւններով, որոնք պսակուեցին ՀՀՇական թեկնածուների համոզիչ յաղթանակով: Պատգամաւոր ընտրուեցին հինգ ՀՀՇականներ, որոնց շարքին «Լարաբաղ» կոմիտէի անդամներ Լեւոն Տէր Պետրոսեանն:

Անլեզալ բազմաթիւ կազմակերպութիւնների գոյութիւնը ջլատում էր շարժման ուժերին: Համախմբման ու համակարգման անհրաժեշտութիւնն ակնյայտ էր: Նման մի փորձ կատարուեց, երբ Ազգային Միասնութեան Ուխտի կողմից 1989ի Մայիսի 7ին հիմնուած Հայոց Ազգային Նախախորհրդարանի⁶⁸ հռչակագիրը 12 կազմակերպութիւններ ընդունեցին Օգոստոսի 1ին: Նախախորհրդարանը Հոկտեմբերի 1ին հրատարակեց իր Հայոց խորհրդարան պաշտօնաթերթի առաջին ու միակ համարը: Ներքին տարաձայնութիւնների պատճառով, նախախորհրդարանը պառակտուեց տարեվերջին եւ պատմութեան գիրկը անցաւ:

1989 Օգոստոսին լոյս տեսաւ Սահմանադրական Իրաւունք Միութեան (ՍԻՄ) *Իրաւունք* թերթի առաջին համարը, լուսապատճենահանուած, 300 տպաքանակով, A-4 ֆորմատի 8 էջ ծաւալով: ՍԻՄի նպատակն էր «Հայաստանում անկախ, իրաւական, ժողովրդավարական պետութեան ստեղծումը» (առաջին համարի խմբագրականից): Նոյն խմբագրականը յայտնում էր, որ իր էջերում տեղ է տալու բազմակարծութեանը, սակայն միաժամանակ զգուշացնում որ, «տպագրման ենթակայ չեն այն նիւթերը, որոնք վիրաւորանք կամ զրպարտութիւն են պարունակում որեւէ անձի, միութեան, կազմակերպութեան կամ կուսակցութեան հասցէին»: Առաջին հինգ համարները ունեցել են հետեւեալ նշանաբանները՝ «Ձայն բազմաց՝ ձայն Աստծոյ» եւ «Մեր նպատակն է՝ Հայկական դեմոկրատական իրաւական պետութեան ստեղծումը»: Վեցերորդ համարից սկսած առ այսօր թերթն ունի «Ուժն է ծնում իրաւունք» նշանաբանը: Իրաւունքը ինքնահրատ, ազատ մամուլի ամէնահին ներկայացուցիչն է, որը կանոնաւոր օրրբերականութեամբ (շաբաթական) լոյս էր տեսնում 1999ի վերջին⁶⁹: Բացի 1992ի ա-

առաջին 7 ամիսներից, թերթն անընդմեջ, իր հիմնադրման օրից, խմբագրում է Հայկ Բաբուխանյանը:

Ազգային արձատների որոնման աշխատանքը անհրաժեշտաբար տանելու էր խորհրդային վարչակարգի տարիներին ճնշված, ապա հասարակական կեանքի լուսանցքում յայտնված Հայաստանեայց Առաքելական եկեղեցու դերի գնահատմանը, եկեղեցու դաւանանքի հրապարակային քարոզչութեանը: Այս ոլորտում նախաձեռնութիւնը անհատներն էին անելու: Օգոստոս 13ին, Զանգակատուն առաջին ոչ-պաշտօնական կազմակերպութեան խորհրդի նախագահ Մուրադ Իսկաջեանը տիկնոջ հետ լոյս ընծայեց Հայաստանի նորագոյն ազատ մամուլի առաջին կրօնական թերթ *Փրկութեան* առաջին համարը: Թերթը եւ նրան յաջորդած նոյնանուն հանդէսը լայն ընդունելութիւն չգտան:

1989ի կէսերից, պաշտօնական շրջանակների կողմից ազատ մամուլի նկատմամբ որոշակի հանդուրժողականութիւնը դրսեւորւում է նաեւ այլ ոլորտում: Հայաստանի լրագրային կրպակներում առաջին անգամ յայտնւում եւ վաճառքի են հանւում *ԼՂԽ*ի պաշտօնաթերթեր *Նորհրդային Ղարաբաղ* ու *Սոյեւտսկի Կարաբաղը* (Նորհրդային Ղարաբաղ): ՀԿԿ ԿԿ Բիւրոն 1989 Յունիսի 21ի նիստում քննարկել է *Նորհրդային Ղարաբաղ* թերթի տպաքանակի մի մասը Հայաստանում տպագրութեան թոյլատրելու հարցը, նկատի ունենալով, որ թերթը «Հայաստանում ունի աւելի քան 40 հազար բաժանորդ»: Կրկնահրատարակումը հիմնաւորւում է նաեւ նրանով, որ թերթի այդ քանակի տպագրութիւնն ու Ստեփանակերտից Երեւան տեղափոխումը «ուղեկցւում է մեծ դժուարութիւններով, բերում է մատակարարման ժամկէտների կանոնաւոր խախտումների»: Բիւրոն յայտնում է, որ թերթի տպաքանակի մի մասը Երեւանում տպագրելու խնդրանքով ՀԿԿ Կենտկոմ են դիմել 1989ի Յունուարին սրեղծուած *ԼՂԽ* Յատուկ Կառավարման Կոմիտէի անդամ Վ. Սիդորովն ու Լեւոնային Ղարաբաղի Մարզային Կոմիտէի նախկին Քարտուղար Վ. Աթաջանեանը: Այս մասին Բիւրոյին ներկայացրած իր կարծիքում, Կենտկոմի գաղափարախօսական բաժինը յայտնում է, որ *Նորհրդային Ղարաբաղը* Հայաստանում կրկնահրատարակելու հնարաւորութիւններ կան: «Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի հրատարակչութիւնը առանձնացրեց ու Ստեփանակերտ քաղաքի տպարանում տեղադրեց համապատասխան սարքաւորումներ եւ սարքեր, ստեղծեց բոլոր պայմանները մարզային կենտրոնից Երեւան մատրիցաների օպերատիւ հաղորդման համար: Որոշուել են նաեւ թղթով ապահովման, չափերի տեղաբաշխման եւ Հայկական ԽՍՀ հասցէներով, ԽՍՀՄ այլ

բնակավայրերով *խորհրդային Ղարաբաղ* թերթի տպաքանակի բաժանման հարցերը»,- յայտնում է գաղափարախօսական բաժնի միջնորդագիրը⁷⁰ : Բիւրոն դրական պատասխան է տալիս եւ *խորհրդային Ղարաբաղը* մի քանի օր յետոյ կրկնահարատարակում է Երեւանում: Ղարաբաղեան թերթերի քիչ-շատ օրիկստիւ տեղեկատուութեան փաստը նկատի ունենալով, նրա իւրաքանչիւր համարից հարիւրաւոր օրինակներ մասնաւոր անձերի եւ ոչ-պաշտօնական կազմակերպութիւնների կողմից Երեւանից ուղարկուած են *ԽՍՀՄ*ի տարբեր հասցէներով փորձելով դրանով մեղմել մէկուկէս տարուց ի վեր հայութեան դէմ ծաւալուած կենտրոնական սուտ եւ թերի տեղեկատուութեան ազդեցութիւնը: ՀԱԱԿի Հայաստան պաշտօնաթերթի իր մշտական, «Մամուլի շաբաթական տեսութիւն» սիւնակում Ք. Գէորգեանը յայտնում է, որ *խորհրդային Ղարաբաղ*ի օրինակով, *Երեկոյեան Երեւանը* նոյնպէս պիտի կրկնօրինակուի ռուսերէն, որպէսզի նրանում տպագրուող հետաքրքիր յօդուածներն անխաթար տեղ հասնեն մեր հոգսերի անծայրածիր երկրում»⁷¹: *Երեկոյեան Երեւան*ի ռուսերէն տարբերակի հրատարակութիւնը, մեզ անյայտ պատճառներով, չի իրագործուած:

Հայաստանում կատարուող իրադարձութիւնները *ԽՍՀՄ*ի իր համախոհ կազմակերպութիւններին ծանօթացնելու նպատակով, ԱԽՄը նախաձեռնեց ռուսերէն պարբերականի հրատարակութեան: *Միջոցառում* (ազատութիւն) առաջին համարը լոյս տեսաւ Սեպտեմբերին՝ յետագայում արցախեան ազատամարտի մասնակից ու նահատակ Աշոտ Մելոյեանի խմբագրութեամբ: Հոկտեմբերին լոյս տեսաւ թերթի երկրորդ, 1990ի սկզբին՝ երրորդ համարը: Շուրջ երկու տարի ընդհատումից յետոյ լոյս տեսած չորրորդ համարից (1992), այն սկսել է բազմացուել տպարանային, օֆսէթ եղանակով:

1989 Հոկտեմբերին լոյս տեսաւ կրօնական բովանդակութեամբ երկրորդ թերթը՝ Գթութիւն Հայկական Բարեգործական Միութեան *Լուսաւորիչ* պաշտօնաթերթը, որը զգալի աւանդ ունեցաւ Հայ Եկեղեցու դաւանանքը զանգուածներին հասցնելու գործում: Նրա հրատարակմանը ՀԿԿ ԿԿ Բիւրոն հաւանութիւն է տուել իր Նոյեմբերի 18ի նիստում⁷²: Թերթը խմբագրում էր Ռաֆայէլ Իշխանեանը: Նա թերթում տեղ էր տալիս նաեւ քաղաքական բնույթի յօդուածներին:

ՀԱԱԿի Հայաստան պաշտօնաթերթը Հոկտեմբերին հանդէս եկաւ կարեւոր նախաձեռնութեամբ. թերթն իր 1989, No. 13, Հոկտեմբերի 4ի համարից սկսած իւրաքանչիւր համարում տպեց արցախեան շարժման ժամանակագրութիւնը՝ 1988ի սկիզբից: Ժա-

մանակագրութիւնը շարունակուեց հրատարակուել մինչեւ թերթի դադարումը 1990ի Դեկտեմբերին:

1989ի աշնանը ՀՀՇՆ կազմակերպչական մեծ աշխատանք տարաւ՝ նախապատրաստելու իր առաջին համագումարը: Այսուհանդերձ, շարժման ղեկավարները յարմար դատեցին ՀՀՇին կից ունենալ մի առերեւոյթ ոչ-քաղաքական կազմակերպութիւն, որի անուան տակ կարող էին ի հարկին պատսպարուել: Այդ ծածկոյթը եղաւ Հայաստանի Գիտնականների Միութիւնը (ՀԳՄ): Միութեան հիմնադիր համագումարը կայացաւ ՀՀՇ առաջին համագումարից երկու շաբաթ առաջ՝ Հոկտեմբերի 20ին: Համագումարը ընդունեց Միութեան հռչակագիրը, ծրագիրը եւ կանոնադրութիւնը: Հռչակագրում ասուած է նաեւ, որ «ՀԳՄն ընդունում է Հայոց Համագային Շարժման հիմնադրոյթները»⁷³: Համարեա նոյն բանն է հռչակում Միութեան ծրագրի Բ. գլխի 3րդ կէտը⁷⁴: Միութեան նախագահ ընտրուեց «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, ՀՀՇ ղեկավարներից, ակադեմիկոս Ռաֆայէլ Ղազարեանը: Ժողէֆ Աւետիսեանի խմբագրած ՀԳՄի Հրատուն հրապարակուեց ընդամէնը երկու անգամ, առաջին համարը 1989ի Հոկտեմբերի 10ին, երկրորդը՝ 1990ի Մարտի 26ին:

Հայաստանի ու հայ արդէի պարբերական մամուլի պատմութեան մէջ չըջադարձային եղաւ 1989ի Նոյեմբերը: Իշխանութիւնները ուրիշ ելք չունէին, բացի ՀՀՇ առաջին համագումարի կայացումը թոյլատրելուց: Սակայն, իշխանութիւններն իրենց ձեռքին ունեցած լծակներով ամէն կերպ խոչընդոտում էին ՀՀՇի է՛լ աւելի ամրապնդմանը: Այդ ջանքերը ի գուր էին: 1989ի վերջին, երկու իշխանութիւնների միջեւ պայքարի ելքը պարզորոշ երեւում էր:

Հայ պարբերական մամուլի պատմութեան մէջ անչըջանցելի երեւոյթ է ՀՀՇ առաջին համագումարի նախօրեակին՝ 1989ի Նոյեմբերի 2ին ՀՀՇ Հայք պաշտօնաթերթի ծնունդը: Տպարանային օֆսէթ եղանակով բազմացուած այս հրատարակութիւնը երեւան եկաւ ազատ մամուլի համար մինչ այդ աներեւակայելի տպաքանակով՝ 50 հազար օրինակով, «Ղարաբաղ» կոմիտէի անդամ, լրագրող Սամուէլ Գէորգեանի խմբագրութեամբ: Թերթի առաջին համարը տպագրուեց Հիկի կի հրատարակչութեան տպարանում՝ առանց կենտկոմի համապատասխան թոյլտուութեան, ՀՀՇի ճնշման տակ: ՀՀՇն կենտկոմին դիմել էր, որպէս օրինական կազմակերպութիւն, իր պաշտօնաթերթը հրատակելու թոյլտուութիւն ստանալու համար: Սակայն, կենտկոմը ձգձգում էր հարցը: Այսուհանդերձ, Հայքի առաջին համարի հրատարակութիւնը կի հրատա-

րակչութեան տպարանից՝ ստիպեց Կենտկոմին տալու իր հաւանութիւնը՝ հակառակ Կենտկոմի մի շարք անդամների ընդդիմութեան: Կենտկոմի քարտուղարութիւնը իր 1989 Դեկտեմբերի 30ի նիստին համաձայնութիւն տուեց գաղափարախօսական բաժնի առաջարկութեանը՝ «Հայոց Համագգային Շարժում հասարակական կազմակերպութեան վարչութեան թերթի հրատարակութեան մասին»: Կենտկոմի որոշումով, թոյլատրուեց էր Հայքի հրատարակութիւնը շաբաթական մէկ անգամ պարբերականութեամբ: Որոշումը յանձնարարում էր Պետական Պլանին՝ Հայքի հրատարակութեան համար թղթի անհրաժեշտ քանակ տրամադրելու, իսկ Հրատարակութիւնների Պետական Կոմիտէին յանձնարարում էր ապահովել թերթի հրատարակութիւնը⁷⁵: Հայքը այսպիսով դարձաւ ոչ-պաշտօնական կազմակերպութիւնների պարբերականներից առաջինը, որին իր սեփական տպարանում հրատարակելու թոյլտուութիւն տուեց ՀԿԿ Կենտկոմը: Դրանով իսկ նոր հանգրուանի սկիզբ դրուեց Հայաստանի պարբերական մամուլի պատմութեան մէջ:

Հայք շաբաթաթերթի յաջորդ, երկրորդ համարը լոյս տեսաւ յաջորդ տարուայ Յունուարի 28ին, որից յետոյ այն անխափան հրատարակուեց շաբաթական կանոնաւոր պարբերականութեամբ: 1995ի սկզբից այն վերածուեց օրաթերթի, ապա 1997ին վերադարձաւ շաբաթական պարբերականութեան:

Հայքի մեծ տպաքանակը հնարաւոր դարձրեց ազատ մամուլի միջոցով իրականացնել մամուլի մի շարք ֆունկցիաներ՝ հասարակական կարծիքի ձեւաւորում եւ արտացոլում, զանգուածների կազմակերպում, ազգային գաղափարախօսութեան որոշ հիմնադրոյթների քարոզում, բազմակարծութեան արտայայտում եւ տեղեկատուութեան փոխանցում: Հայքի երեւումով, հանրահաւաքները, որպէս ճշգրիտ տեղեկատուութեան փոխանցման հիմնական միջոցի, իրենց այս դերը կորցրեցին: Ս. Գէորգեանը յետագային վկայում է. «Հայքը տպագրուեց էր մեծ դժուարութիւններով, բազմաթիւ խոչընդոտներ յաղթահարելով... Երեք հոգով էինք շաբաթաթերթը հրատարակում, բայց միւս կողմից ունէինք հրաշալի թղթակիցներ ինչպէս Լեւոն Տէր-Պետրոսեանը, Վանօ Սիրադեղեանը, Կտրիճ Սարգսեանը, «Ղարաբաղ» կոմիտէի (ՀՀՇ - Գ. Ե.) վարչութեան անդամները⁷⁶: Հայքում լոյս տեսան քաղաքական-գաղափարախօսական կարեւորագոյն յօդուածներ, ինչպէս «Ղարաբաղ» կոմիտէի ու ՀՀՇ վարչութեան անդամ Վազգէն Մանուկեանի «Գնացքից թռչելու ժամանակը» յօդուածը, որով ՀՀՇն միանշանակ շրջադարձ էր անում դէպի Հայաստանի անկախութիւն:

Յեղակոծից ու Հայքից յետոյ տպարանային եղանակով բազմացուած երրորդ պարբերականը եղաւ «Սրբ. Էջմիածին» բարեգործական միութեան *Եղիցի լոյս*, թերթը որը հրատարակուեց Էջմիածին քաղաքում, քաղաքային տպարանում: Թերթն ունէր քաղաքական յստակ ուղղութեամբ, որի մասին խօսում է թերթի նշանաբանը՝ «Եղիցի ազատ Հայաստան»: Թերթի առաջին համարը լոյս տեսաւ Նոյեմբերի 29ին:

Մինչ այդ Նոյեմբերի 15ին ՀԱԱԿը պառակտուեց երկու՝ Ռուբէն Պետրոսեանի ու Մեխակ Գաբրիելեանի թեւերի, որոնք իրենց պաշտօնաթերթերում կատաղի պայքար սկսեցին միմեանց դէմ, դուրս գալով լրագրական բարոյականութեան սահմաններից: Պառակտման պատճառը քաղաքական-գաղափարական չէր. այն աւելի շուտ աթոռակուիւ էր: Շուրջ չորս ամիս գոյութիւն ունեցան երկու ՀԱԱԿեր եւ երկու Հայաստան պաշտօնաթերթեր, որոնցից իւրաքանչիւրը յաւակնում էր միակ օրինականը լինելու: «Բազմապիսի ասէկոսէների» տեղիք տուող եւ ժողովրդին ապակողմնորոշող այս անքնական վիճակին վերջ տալու նպատակով Ռուբէն Պետրոսեանի թեւի «ներկայացուցչական ժողովը» ի վերջոյ որոշեց կազմակերպութիւնը վերակոչել «Հայ Ազգային Կուսակցութիւն» (ՀԱԿ), իսկ պաշտօնաթերթը՝ *Ազգ*⁷⁷: *Ազգը* Հայաստանի ժառանգորդը լինելը չեչտելու համար, մինչեւ իր հինգերորդ համարը ներառեալ՝ պահպանեց Հայաստանի ընդհանուր համարակալումը, ապա անցաւ նոր համարակալման: ՀԱԿը բացայայտօրէն յարում էր ՀՅԴին ու ՀԱԿից աւելի ՀՅԴի անցեալի ու ներկայի խնդիրների մասին էր գրում:

Երկրաշարժի առաջին տարելիցին, Հայաստանի ժուռնալիստների Միութիւնն ու Հայաստանի Երեխաներ հիմնադրամը համատեղ հրատարակեցին *Առաւոտ լուստ* խառը ուղղագրութեամբ վերնագրով մի թերթ, որը լոյս տեսաւ միայն մէկ անգամ, 16 էջ, 2 տպագրական մամուլ ծաւալով: Այն տպագրուել է ՀԿԿ ԿԿ հրատարակչութեան տպարանում: Թերթը յայտնում էր որ իրացումից ստացուած ողջ եկամուտը յատկացուելու է աղէտի գօտու ծնողագուրկ երեխաներին:

Դեկտեմբերին լոյս տեսան եւս երկու ինքնահրատ պարբերականներ՝ *Զահը*՝ Երեւանում եւ *Պայքարը*՝ Կիրովականում: *Զահը* հրատարակուել է ընդամէնը երկու անգամ, Օհան Յարութիւնեանի խմբագրութեամբ: Շատ կողմերով այն յիշեցնում է ՀԱԵՄի *Ազատութեան աւետարներին*: *Զահի* առաջին համարում լայն տեղ է յատկացուած Գարեգին Նժդէհի կեանքին ու գաղափարախօսական ժառանգութեանը:

Շրջանային առաջին ինքնահրատ անլեգալ պարբերականներից է Կիրովականի Սահմանադրական խմբերի Միութեան (ՍԽՄ) Պաշար թերթը, որը որպէս նշանաբան կամ անուան լրացում ունեցել է «վասն հայրենեաց եւ արդարութեան» արտայայտութիւնը: Մեքենագիր թերթը բազմացուել է Երեւանում (առաջին համարը 500, երկրորդը՝ 1000 օրինակով) ԱԽՄի հրատարակչութիւնում, որը ինքնահրատ շատ պարբերականներ ու գրքոյկներ էր տպում: ՍԽՄը համակրել է ՀՀԾին ու դարձել նրա կոլեկտիւ անդամ կազմակերպութիւն: Այս փաստն արտայայտուել է Պաշարի առաջին համարներին՝ «ՀՀԾ Կիրովականի Սահմանադրական խմբերի միութեան թերթ» ենթավերնագրում, որի «ՀՀԾ» սկզբնամասից յետագայում հրաժարուել է, հաւանաբար՝ ՀՀԾի հետ տարաձայնութիւնների պատճառով: Թերթը հիմնականում բովանդակել է զանազան նիւթեր, որոնք առնչուում էին 1990ի կէսերին ՀՍՄՀ ԳԽ ընտրութիւններին, ընթերցողներին կոչ անելով քուէ չտալ կոմունիստ թեկնածուներին: 1990ի փետրուարին, ՍԽՄը հրատարակեց *Օգնութիւն քաղաքատարկեային* գրքոյկը: Պաշարը դադարեց 1990ի երկրորդ կէսին: Հետաքրքրական է ՍԽՄի ու նրա Պաշար թերթի յետագայ ճակատագիրը: Տարիների դադարից յետոյ, նրանք վերայայտնուեցին. Կիրովականի ՍԽՄը վերանվանուել էր Վանաձորի Սահմանադրական իրաւապաշտպան Կենտրոն, որը շարունակեց թողարկել 1989-90ին Պաշարը՝ պահպանելով ընդհանուր համարակալումը: Նոր շրջանի Պաշարը հրատարակուեց ԱՄՆի «Եւրասիա» հիմնադրամի ֆինանսական օժանդակութեամբ: Կիրովական-Վանաձորի այս կազմակերպութիւնների ղեկավարն է Գէորգ Մանուկեանը, որը նաեւ թերթի խմբագիրն է:

1989ին Կիրովականում լոյս է տեսել նաեւ «Զարթօնք» միաւորման համանուն թերթը՝ Մանուէլ Միկոյեանի խմբագրութեամբ: Այս միաւորումը եւս ՀՀԾ կոլեկտիւ անդամներից էր, եւ այդ մասին նշուել է *Զարթօնքի* ենթավերնագրում:

1989ին լոյս են տեսել նաեւ այլ պարբերականներ՝ «Զօրավար Անդրանիկ» միութեան օրգան *Հայորդիք* անկանոն պարբերականութեամբ հանդէսը, ՀԼԿԵՄ Կոմսյրիի Քաղաքային Կոմիտէի աշխատանքային շտաբի ռեկլամային-ինֆորմացիոն *Նոր Գիւմրի* թողարկումը, Հրազդանի շրջանային համանուն թերթի երիտասարդական յաւելուած *Վահագն* թերթը (Դեկտեմբերի 2ից), ՀԴՊԸ Կէս կատակ Կէս լուրջ քաղաքական երգիծանքի պարբերականը (միակ համարը լոյս է տեսել Մայիսին): Այս պարբերականները քիչ-շատ լիչատակելի ազդեցութիւն չեն ունեցել:

1989ին հայկական ինքնահրատ մամուլ ծնունդ նաեւ Արցախում եւ ԽՍՀՄ եւս երեք հանրապետութիւններում: ԼՂԻՄի հայկական իշխանութիւնները 1989ին օրինական ճանաչում չնորհեցին միջանի ոչ-պաշտօնական կազմակերպութիւնների, որոնց պարբերականները այնուհետեւ լոյս տեսան տպարանային բազմացումով, օֆսէթ եղանակով, կէս տարիով կանխելով այլընտրանքային մամուլի նման եղանակով հրատարակութիւնը Խորհրդային Հայաստանում: Մայիսի 1ին Ստեփանակերտում լոյս տեսաւ «Ամարաս» Հայրենակցական-Բարեգործական Միութեան համանուն թերթի առաջին համարը: 1989ի Յուլիսի 8ին Ղարաբաղի մետաքսի կոմբինատի (Ղարմետաքսկոմբինատ) ակումբում հիմնուեց «Հայոց արցախեան Միացում» ժողովրդական շարժումը: Հիմնադիր կոնֆերանսը հաստատեց կազմակերպութեան կանոնադրութիւնը, որի երրորդ կէտը հռչակում էր. «Հայոց արցախեան Միացում» ժողովրդական շարժման առաջնահերթ նպատակը ԼՂԻՄի վերամիաւորումն է Հայկական ԽՍՀին»: Կոնֆերանսը ընտրեց կազմակերպութեան 11 հոգինոց խորհուրդ, որին անդամակցում էին յետագայ տարիներին արցախեան ազատամարտում հռչակուած Ռոբերտ Քոչարեանն ու Սերժ Սարգսեանը: Բաց քուէարկութեամբ Խորհրդի նախագահ ընտրուեց Ղարմետաքսկոմբինատի կուսակցական կազմակերպութեան քարտուղար Ռ. Քոչարեանը (ներկայումս Հայաստանի հարապետութեան նախագահ): Կոնֆերանսն ընտրեց նաեւ Միութեան տպագիր օրգանի խմբագրին, այս պատասխանատուութեան կոչելով Մարսէլ Պետրոսեանին: Ստեփանակերտի Քաղաքային Սովետի կողմից «Միացում»ը գրանցուեց Յուլիսի 28ին, որից 12 օր յետոյ՝ Օգոստոսի 9ին լոյս տեսաւ Միացում ժողովրդական Շարժման տեղեկագիր *Միացում* թերթի առաջին ու միակ համարը, որը տարածուեց անվճար: *Միացումի* նշանաբանն էր՝ «Հայ ժողովուրդ, քո ուժը քո միասնութեան մէջ է»: Արցախում 1989ին լոյս տեսաւ նաեւ *Վերածնունդ* ինքնահրատ թերթը՝ ՀՅԴի համակիրների կողմից: 1990ին *Վերածնունդի* փոխարէն հրատարակուեցին «ՀՅԴ Արցախի կազմակերպութեան պաշտօնաթերթ» *Պայքար* եւ «Հայ Երիտասարդութեան ճակատ»ի *Աւետեաց երկիր* անլեզալ պարբերականները:

«Ներքին» սփիւռքում հայկական առաջին ինքնահրատ պարբերականը լոյս տեսաւ Լատվիայի մայրաքաղաք Ռիգայում, 1989ի Ապրիլի 20ի մօտ: Ռուսերէն *Լոյսի* առաջին համարը նուիրուած էր «Ղարաբաղ» կոմիտէի ձերբակալուած անդամներին: Նորայր Բաբաջանեանի խմբագրած թերթը հրատարակում էր «Վասն ազատ եւ միացեալ Հայաստան»ի նշանաբանով: *Լոյսը* սերտ կապեր

էր հաստատել Հայաստանի արցախական ու անկախական շար-
ժումների հետ, նրանց պաշարի մասին տեղեկացնում էր Լատ-
վիայի հասարակութեանը եւ կամուրջ էր Հայաստանի ու մերձ-
բալթեան հանրապետութիւնների հակախորհրդային անկախական
շարժումների միջեւ: Թերթի առաջին համարի հրատարակու-
թեան ծախսերի մի մասը հոգացել է Երեւանի «Հայծխախոտ» ար-
տադրական միաւորումը: *Հոյսը ԽՍՀՄ* (բացի Հայաստանից) հայ-
կական պարբերական մամուլի ոչ միայն առաջին ազատ թերթն է,
այլեւ այդ մամուլի առաջին պարբերականը, որը շարունակ է հա-
մակարգւիչով:

1989 Նոյեմբերին Մոսկուայում լոյս տեսաւ *Հայ լրաբեր-Արմ-
եանակի վեստնիկ* հայերէն-ռուսերէն թերթի առաջին համարը:
Այն տպագրուել է Երեւանում, Հէկ ԿԿ հրատարակչութեան տպա-
րանում, Հայքի առաջին համարի տպագրութիւնից միքանի օր
յետոյ:

1989ի վերջին, Կիւեւի Հայաստանի Բարեկամներ Միութիւնը
հրատարակեց *Համայնք* թերթը, որը 1990ի սկզբին անուանափոխ-
ւեց *Ազատամարտի*: Միութեան ակտիւիստներ Օլենա Զամոստեա-
նը, Վադիմ Դիւնիչը, Դմիտրի Նովիկովն ու միւսները այս ինք-
նահրատման միջոցով փորձել են հակազդել խորհրդային հակա-
հայկական տեղեկատուութեանը Ուկրաինայում⁷⁸:

1990 Ապրիլին Տալլինում (էստոնիա) լոյս տեսաւ *Վահագն
թերթը*: Նրան յաջորդելու էին շատ այլ պարբերականներ՝ *Մաս-
եաց աղանչին* Սիմֆերոպոլում, *Պրօ Արմենիան* Մոսկուայում, *Հոյ-
սը* Սամարղանդում, եւլն.:

«Ներքին» սփիւռքի պարբերական մամուլը իր համեստ լու-
ման էր ներդնելու Հայաստանում, Արցախում եւ անդրկովկասեան
տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձութիւնների մասին
ճիշդ տեղեկատուութիւն տարածելու գործում, դրանով էլ իր մաս-
նակցութիւնը բերելով Արցախի՝ Հայաստանի վերամիաւորման ու
Հայաստանի անկախութեան վերականգնման պաշարին:

Խորհրդահայ պարբերական մամուլի նոր անունները 1987-1989 թթ.

Հայաստան

Անուն	Հրատ. սկիզբ	Հրատ. դարձր.	Համարների քանակ	Հրատարակիչ	Այլ նշումներ
Տեղեկագիր	Մայիս 1987	Յունի. 1988	առնչ. 7 համար	Հաւասարեան Աշոտի եւ Ազատեան Արշակի Պաշտպանութեան կոմիտէ	
Անկախութիւն	24 Հոկտ. 1987	—	շուրջ 400 համար	ԱՄՄ	1996թ. ետք լոյս կը տեսնէ որպէս ներկուսակցական պարբերական
Հրապարակախոսութիւն	Հոկտ. 1987	Մայիս 1988	հաւանար. 8 համար	ԱՄՄ	
Արցախի Ձայն	1987ի վերջ	Ապրիլ 1990	շուրջ 35 համար	«Միացում» ընկերութիւն	
Կորուս Արցախ (ռուս.)	1987ի վերջ	Ապրիլ 1990	շուրջ 35 համար	«Միացում» ընկերութիւն	
Ինքուր	20 Յունի. 1988		առնչ. 166 համար	«Ինքուր» արտատրական միաւորում	հաւանար. դադարեւ 1991ի վերջին
Ժուռնալիստ	Յունի. 1988	կը շարունակուի		ԵՊՀ Ժուռնալիստիկալի բաժին	
Աստղիկ	Փետր. 1988	կը շարունակուի	շուրջ 10 համար	ԵՊՀ Բանասիրական բաժին	տարեգիրք է
Հայ դատ	Փետր. 1988	1990	13 համար	Հայ Դատի Պաշտպանութեան Ընկերութիւն	լոյս է տեսել Մարտին
Արժանաւիկ վոլորու (ռուս.)	Փետր. 1988		առնչ. 4 համար	Հայ Դատի Պաշտպանութեան Ընկերութիւն	լոյս է տեսել Մարտին եւ դադարեւ

Անուն	Հրատ. ակտը	Հրատ. դադար.	Համարները քանակ	Հրատարակիչ	Այլ նշաններ
Բուշման (ուռ.)	Ապրիլ 1988	Դեկտ. 1988	հաւանար. 8 համար	«Ղարաբաղ» կոմիտե	համակարգչով շարունակ հալատանհան Ա. պարբերականն է
Զանգակատուն	Մալիս 1988	Յուլիս 1990	7 համար	ձինչեւ No. 5ը ներառեալ «Զանգակատուն» ընկ., No. 6 եւ 7ը՝ «Միացում» ընկ.	
Հալըրենիք	Մալիս 1988		ձինչեւ 1998ի վերջը՝ 14 համար	ԱՄՄ	շարունակում է ներկուակցական պարբերականի ձեւով
Բանքեր	Յունիս 1988	1988 ?		ԱՄՄ	դադարել է
Մաշտոց	18 Յուլ. 1988	1990	10 համար	«Մաշտոց» միաւորում	
Տեղեկագիր	Օգ. 1988			Հալ Դատի Պաշտպանութեան Ընկերութիւն	դադարել է
Միասնութիւն	Հոկտ. 1988	Դեկտ. 1988	2 համար	«Հարեկ» Ազգային կազմակերպութիւն	
Յեղակոն	30 Նոյ. 1988	Մեպտ. 1991	5 համար	Հալ Երիտասարդաց Դաշնակցութիւն	
Տեղեկագիր	Նոյ. 1988		միայն 1 համար	«Ղարաբաղ» կոմիտե	
Երեսանի համալսարանի կողմից	Նոյ. 1988		միայն 1 համար	Դաւիթ Յովհաննէսեան եւ Սուրէն Զոհան	
Քորան	1988	1989 ?		«Քորան» մշակութային ակումբ	

Տերեփագիր	1988	1990	Հաւանաբ. 18 Համար	Հովհ. Աշխատանքի եւ Սոցիալական Հարցերի Պետ. կոմիտե
Բիւլետեն (ռուս.)	1988	1990	Հաւանաբ. 18 Համար	Հովհ. Աշխատանքի եւ Սոցիալական Հարցերի Պետ. կոմիտե
Ինքնուրուշմ	1 Դեկտ. 1988	Յունիս 1989	7 Համար	ԱՄՆ
Առուն	Հրատ. ակիւք	Հրատ. դադար.	Համարներէ քանակ	Հրատարակիչ
Ինքնուրուշմ տերեփագիր	5 Դեկտ. 1988	Մարտ 1989	56 Համար	Աւանգարդ, Կոմունիստ եւ Կոմսոմոլցե թերթեր
Յոյս	13 Դեկտ. 1988	Մարտ 1989	56 Համար	Աւանգարդ, Կոմունիստ եւ Կոմսոմոլցե թերթեր
Երկրորդ թիւն	Դկտ. 88 ք. կէս	Յունիս. 1994		Լենինականի Բանուար թերթ
Անքնորդի ֆոնդ	Դեկտ. 1988		միայն 1 Համար	«Անքնորդի վերականգնման ֆոնդ» Ազգային-Մշակութային Միութիւն
Գրուծա (ռուս.)	16 Յունիս. 1989	21 Մարտ. 1990	67 Համար	Կերովականի կարծիքներ
Դաշինք	11 Մարտ 1989	25 Ապրիլ 1989	3 Համար	Հայ Ուսանողութեան Դաշինք
Տերեփագիր	Մարտ 1989	1989 Մ. յ. ի վերջ	4 Համար	14-ի Պաշտպանութեան Խորհուրդ
Բիւլետեն (ռուս.)	Մարտ 1989	Ապրիլ 1989	2 Համար	14-ի Պաշտպանութեան Խորհուրդ
Ռունակ	10 Ապրիլ 1989	30 Ապրիլ 1989	4 Համար	Հայոց Համագգային Շարժում
Ազատ Հալք	24 Մայիս 1989	7 Օգոստոս 1990	85 Համար	Ազգային Միասնութեան Ուխտ
Միացում	Փարուն 1989		Հաւանաբ. 1 Համար	Լէւոյի անուան No. 65 դպրոց
Կէս կատակ կէս լուրջ	Մայիս 1989		միայն 1 Համար	Հայ Դատի Պաշտպանութեան Ընկերութիւն
Ելանք ի բոցոյն	Յունիս 1989		միայն 1 Համար	Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն

Անուն	Հրատ. սկիզբ	Հրատ. դադար.	Համարների քանակ	Հրատարակիչ	Այլ նշումներ
Հայաստան	12 Յուլիս 1989	15 Նոյ. 1989	17 համար	Հայաստանի Ազգային Անկախութիւն Կուսակցութիւն	15 Նոյ. 1989-ին ՀԱՊԿՐ պառակտուեց, որի հետեւանքով լոյս տեսան երկու Հայաստաններ
Տեղեկագիր	10 Յուլիս 1989	7 Օգ. 1989	5 համար	ՀՀ	
Հրատուական թերթիկ	Յուլիս 1989	Յունի. 1990	7 համար	ՀՀ	
Միաբանութիւն	Յուլիս 1989	Հոկտ. 1989	հաւանութ. 4 համար	«Նարեկ» Ազգային Կազմակերպութիւն	
Փրփութիւն	13 Օգ. 1989	26 Նոյ. 1989	13 համար	Մուրատ Իսկանճեան	
Ինֆորմացիոնիկ (հասոյկ (սուս.))	Օգ. 1989	29 Հոկտ. 1989	6 համար	ՀՀ	
Իրաւունք	Օգ. 1989	4ը շարունակութի		«Սահմանադրական Իրաւունք» Միութիւն	գործադիր ամենահին ազատ պարբերականն է
Սկզբնական (սուս.)	Մեկտ. 1989	1996	82 համար	ԱՊՄ	
Հայոց խորհրդարան	1 Հոկտ. 1989		ձիւն 1 համար	Հայոց Ազգային Նախախորհրդարան	
Բարձրի (սուս.)	10 Հոկտ. 1989	5 Հոկտ. 1990		Լեւոնականի Բանուոր թերթ	Բանուոր թերթի լաւելում
Լուսաւորիչ	Հոկտ. 1989	1997ի սկիզբ		Գթութիւն հակական Բարեգործական Միութիւն	
Հրատու.	20 Հոկտ. 1989	26 Մարտ 1990	2 համար	Հայաստանի Գիտնականների Միութիւն	

Անուն Հայր	Հրատ. ակիդք 2 Նոյ. 1989	Հրատ. դարար. կը շարունակուի	Համարները քանակ	Հրատարակիչ ՀՀԾ	Այլ նշումներ
Ուկրաինական արտիստ (ուսու.)	7 Նոյ. 1989	1990 ?	Հաւանար. 20 համար	«Ուկրաին» միադրման դեկավարութիւն	
Հայաստան (Ռ. Պետրոսեանի թեւ.)	15 Նոյ. 1989	10 Օգ. 1990	8 համար	ՀԱԱԿ (Ռ. Պետրոսեանի թեւ.)	17 Մարտ 1990ից՝ Ազգ
Հայաստան (Մ. Գաբրիէլեանի թեւ.)	15 Նոյ. 1989	Դեկտ. 1990	67 համար	ՀԱԱԿ (Մ. Գաբրիէլեանի թեւ.)	
Եղիշի լոյս	29 Նոյ. 1989			«Մըբ. էջմիածին» Բարեգործական Միութիւն	Դարարել է
Ազատութեան աւետարներ	աշուն 1989	1990ի ակիդք	3 համար	Հայ Ազգային Երիտասարդական Միութիւն	
Առաւօտ լուսոյ	7 Դեկտ. 1989		միայն 1 համար	Հայաստանի Ժուռնալիստներ Միութիւն եւ «Հայաստանի երեսներ» Հիմնադրամ	
Զահ	Դեկտ. 1989	1990ի ակիդք	2 համար	Օհան Յարութիւնեան	
Պաշար	Դեկտ. 1989		3 համար (1989-90)	Կիրովականի Սահմանադրական կոմիտէի Միութիւն	շարունակուած է ներկայիս ակիդքական տեղեկագրի մետով
Նա արտիկան Լեւինականա (ուսու.)	1989	1990 ?		«Հայր-արտիկան» արտարար- չիտարական միադրում	
Վահագն	2 Դեկտ. 1989	1990	5 համար	Հրատարակիչ Հրատարակիչ թեւ	Հրատարակիչ լուսնուած

Անուն	Հրատ. ակտը	Հրատ. դադար.	Համարների թանակ	Հրատարակիչ	Այլ նշումներ
Զարթոնք	1989			«Զարթոնք» ծխատուրմ, Կիրովական	դադարել է
Հայրորդիք	1989			«Զօրավար Ադրանիկ» ծխատուրմ	դադարել է
Նոր Գիւմրի	1989	1990		ՀԼԵՄ Կուժալիի Քղքային Կոմ. աշխատանքային շտաբ	

Լեւնային Ղարաբաղ

Ամարաս	1 Մայիս 1989		Հաւանար. 1 համար	«Ամարաս» Հայրենակցական- Բարեգործական Միութիւն	
Միացում	9 Օգ. 1989		Հաւանար. 1 համար	Հայրց Արցախեան «Միացում» Շարժում	
Վերածնունդ	1989				

Խորհրդահայ Սփիւռք

Լոյս (ռուս.)	20? Ապր. 1989	1989	3 համար	Հատվարի հայկական համայնք	Ռիկա
Հայ լրագր- Արժանակի գեաների (հայ.-ռուս.)	29 Նոյ. 1989			Մոսկուա	անկանոն շարունակում է հանդէսի ձեւով
Համայնք (ռուս.)	1989	1990		Կիւնի «Հայաստանի բարեկամներ» Միութիւն	1990 թն անուանափոխուել է Ազատամարտի

- ¹ Ֆիլմը պատրաստվել է 1999 թ. սկզբին եւ առաջին անգամ ցուցադրուեց Հայաստանի պետական հեռուստատեսության առաջին ծրագրով նույն թվականին Ապրիլի 24-ի երեկոյան:
- ² Օրինակ, Մոլոտովյան Հայաստան պաշտոնաթերթի 1988 թ. Օգոստոսի 13-ի համարի վատորակ տպագրութեան հարցը ՀԿԿ ԿԿ Բիւրոյի կողմից քննուել է երկու օր յետոյ. հրատարակութեան գլխավոր ինժեներին յայտարարուել է խիստ նկատողութիւն, թերթի գլխավոր խմբագրի տեղակալին՝ նկատողութիւն, իսկ հրատարակութեան տնօրէնի պատասխանատուութեան հարցը որոշուել է քննել արձակուրդից վերջինիս վերադառնալուց յետոյ. տե՛ս՝ Հայաստանի Հանրապետութեան Հասարակական եւ Քաղաքական կազմակերպութիւնների Փաստաթղթերի կենտրոնական Պետական Արխիւ (ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ), ֆոնդ 1, ցուցակ 82, գործ 26, թուղթ 115, 116:
- ³ Օրինակ, ՀԿԿ ԿԿ քարտուղարութիւնը իր 1988 թ. Սեպտեմբերի 27-ի նիստին քննարկել է Սփիւռքահայութեան հետ Մշակութային կապի կոմիտէից ու Արտասահմանեան Երկիրների Հետ Բարեկամութեան ու Մշակութային կապերի Հայկական Ընկերութեան նահագանութիւնից ստացուած առաջարկութիւնը այս կազմակերպութիւնների վերաձեռնած Հայաստան համատեղ ամսագրի խմբագրական կոլեկտիւն ընդունելու եւ վաճառք Դաւթեանին գլխավոր խմբագիր հաստատելու մասին տես՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 11, ց. 83, գ. 81, թ. 122-124:
- ⁴ Այս փաստը հաստատում է նաեւ մինչեւ 1978 թ. վերջը ՀԿԿ ԿԿ գաղափարախօսութեան գծով քարտուղար աշխատած Կարլէն Դալլաքեանը իր լուչերում՝ Յուշապատում (դէմքեր, իրողութիւններ, մտորումներ), Երեւան, 1998, էջ 31:
- ⁵ Այս մասին մեզ բանաւոր յայտնել է նույնիսկ Գրիգոր Մարտիրոսեանը:
- ⁶ Վալերի Ալդինեան, «Բայլոյ, թռչող, լողացող ու սողացող ամէն բան», Երեւանի Մամուլի Ակումբի Տեղեկագիր, ամսաթերթ, Երեւան, 1997, No. 4, Մայիս, էջ 22:
- ⁷ Նշելով, թէ Հայաստանի Ժողովուրդը սփիւռքահայ «աւելի քան 700 անուն մամուլից մեծ ուշացումով ստանում է միայն միջանիւր», Անկախութեան խմբագրապետ Ռաֆայէլ Համբարձումեանը խորհրդային Հայաստանի կառավարութիւնից պահանջում էր հնարաւորութիւն ստեղծել բաժանորդագրուելու Սփիւռքի ցանկացած թերթի, ամսագրի, հանդէսի եւ գրքի, ու դրանց վաճառքի համար յատուկ կրպակներ եւ խանութներ ստեղծել. տե՛ս՝ Անկախութիւն, չաբաթաթերթ, Երեւան, 1988, No. 32, 8 Օգոստոսի, էջ 7-8:
- ⁸ Զրպարտիչներին տրուող մականունն խորհրդային ժամանակաշրջանում:
- ⁹ ԵՄԱ Տեղեկագիր, անվերնագիր, 1997, No. 8, Սեպտեմբեր, էջ 21:
- ¹⁰ Ազգայնականութեան տեսութեան արեւմտեան յայտնի տեսաբան Էռնեստ Գելլնէրը վերակառուցման քաղաքականութիւնը սահմանում է որպէս «արմատական վերափոխում վերելից՝ առանց բռնութեան եւ ընդհատութեան»: Նա վերակառուցման հիմնական երեւոյթ է յայտարարում խօսքի ու մամուլի ազատութիւնը. Ernest Gellner: "Nationalism in the vacuum", in Alexander J. Matyl (ed.), *Thinking Theoretically About Soviet Nationalities*, New York: Columbia University Press, 1995, էջ 246:

- ¹¹ Վալերի Արդինեանի ելույթը ԵՄԱԿ կազմակերպած «Ընտրութիւնների արտացոլումը զանգուածային լրատուութեան միջոցներում» սեմինարում, ԵՄԱ Տեղեկագիր, 1997, No. 1, Յունուար, էջ 19:
- ¹² 1960ականների կեսերի ժողովրդական ալեկոծման մասին տե՛ս՝ George A. Bournoutian, *A History of the Armenian People*, vol. II: 1500 A.D. to the Present, Costa Mesa, CA: Mazda, 1994, էջ 169-170. Ronald Grigor Suny, *Armenia in the Twentieth Century*, Chico, CA: Scholars Press, 1983, էջ 77-83. նոյն՝ *Looking Toward Ararat: Armenia in Modern History*, Bloomington and Indianapolis: Indiana University Press, 1993, էջ 185-191. նոյն՝ “Soviet Armenia”, in Richard G. Hovannisian (ed.), *The Armenian People from Ancient to Modern Times*, vol. II, New York: St. Martin’s Press, էջ 374-378. David Kowalewski, “The Armenian National Unity Party: Context and Program,” *The Armenian Review*, vol. 31, No. 4-124, April 1979, էջ 364-370. Mark Malkasian, “Gha-ra-bagh!”: *The Emergence of the National Democratic Movement in Armenia*, Detroit: Wayne State University Press, 1996, էջ 135-137:
- ¹³ Թանուն Հայրենիքի, ամսագիր, Երևան, 1996, No. 2, էջ 43:
- ¹⁴ ԱՄՆ-ը երէկ, այսօր, վաղը, Ինքնորոշում Միաւորման հրատարակութիւն, Երևան 1999, էջ 3:
- ¹⁵ Հաւանաբար լոյս է տեսել 1970ին. տե՛ս նոյնը՝ էջ 4:
- ¹⁶ Տե՛ս՝ Ռ. Համբարձումեանի, Թուղթ ընդհանրական-Թորոքորակ, 2րդ չափիկի վրայ տպուած, Ռ. Համբարձումեանի կենսագրականը, Երևան, 1990:
- ¹⁷ Հայ Երիտասարդների Միութիւնը (ՀԵՄ) հիմնուել է 1979ին, Մարգարէտ Թարութիւնեանի, Վարդան Թարութիւնեանի եւ Իշխան Մկրտչեանի կոմիտէ: Ըստ «Ճակատագրերի սահմանը» վաւերագրական ֆիլմում Վ. Թարութիւնեանի վկայութեան՝ ՀԵՄ-ը ԱՄԿի մասնաճիւղերից էր, թէեւ ՀԵՄ-ի ծրագիրը, ի տարբերութիւն ԱՄԿի ծրագրի, յստակօրէն դնում էր Հայաստանի անկախութեան նպատակը: ՀԵՄ-ի երեք հիմնադիրներն ու անդամ Սամուէլ Եղիազարեանը 1981ի Ապրիլի 9ին դատապարտուեցին հինգ եւ աւելի տարիների բանտարկութեան եւ աքսորի: Իշխան Մկրտչեանը 1985ի Ապրիլի 24ին, չպարգուած հանգամանքներում ինքնասպանութիւն գործեց կամ սպանուեց Պերմի (Ռուսաստան) արգելափակման ճամբարում:
- ¹⁸ Alexander Suetnov, *Netraditsionniye izdaniy – Bibliograficheskii ukazatel* [ոչ-աւանդական հրատարակութիւններ. մատենագիտական ուղեցոյց], Երկրորդ, համալրուած հրատարակութիւն, Մոսկուա, 1992, Ապրիլ, էջ 53:
- ¹⁹ Տե՛ս՝ Ռ. Համբարձումեանի կենսագրականը:
- ²⁰ Ըստ Ռ. Համբարձումեանի բանաւոր վկայութեան, Հրապարակայնութիւնը լոյս է տեսել Անկախութեան առաջին համարից յետոյ: Նոյն աղբիւրի համաձայն, Հրապարակայնութիւնը լոյս է տեսել ընդամենը երկու համար:
- ²¹ Ռ. Համբարձումեան, «Արձագանգ-ինքնաբացատրութիւն» նամակ, Ազգ օրաթերթ, 1995, 19 Մայիս, էջ 2:
- ²² ԽՍՀՄ-ում առաջին այլընտրանքային քաղաքական շարժաթերթին էր 1987ի Օգոստոսի 1ին Մոսկուայում լոյս տեսած, Ա Պոտորաբինէկի հիմնած ու խմբագրած

իջապրէս խրոնիկան (ճեպընթաց ժամանակագրութիւն), որը շարունակուած է առ այսօր:

²³ Անկախութիւն, 1997, No. 7, 5 Դեկտեմբերի, «Տեղական լուրեր» բաժին:

²⁴ Անկախութիւն, 1998, No. 14, 4 Ապրիլի:

²⁵ Տե՛ս՝ Ռ. Համբարձումեանի կնեսագրական:

²⁶ Մինչեւ 1985 թուականը Արցախեան ազատագրական շարժման պատմութեան համար տե՛ս՝ Զաւէն Մսրըլեան, Հայկական հարցի մասին, Պէլլութ, 1978, էջ 168-185. Բագրատ Ուլուբաբեան, Արցախեան գոյապայծարը, Ա. Երեւան, 1994, էջ 164-288. Նոյնի՝ Արցախի պատմութիւնը սկզբից մինչեւ մեր օրերը, Երեւան, 1994, էջ 252-268:

²⁷ Տե՛ս՝ Խորհրդային Արեւելանի պետական լրատուական գործակալութեան՝ Ազերինֆորմի հաղորդագրութիւնը Կոմունիստ հայատառ օրաթերթում, Բաքու, 1988, փետրուարի, էջ 2:

²⁸ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց. 82, գ. 21, թ. 2:

²⁹ Sergei Bablunian, "Kak nam khotseli reanimirovat?" [ինչպէ՞ս փորձեցին մեզ վերակենդանացնել], Novoe Vremia, շաբաթաթերթ, Երեւան, 1997, No. 9, 26 փետրուարի:

³⁰ Նոյն:

³¹ Նոյն:

³² Տիգրան Թարութիւնեանը այս երկու պարբերականների անունը նշում է «Լրատու» ձևով, իսկ հայերէն Տեղեկագրի հրատարակութեան ամիս՝ 1988ի Սեպտեմբեր. տե՛ս՝ «Մամուլի Ազատութեան Համաշխարհային Օր - Մայիսի 3», ՄԱԿի Հասարակական Տեղեկատուութեան Բաժանմունք (այսուհետեւ՝ ՄԱՀՕ), Երեւան, 1997, էջ 80:

³³ Խորհրդային Միութիւն-Մերձաւոր Արեւելք տարածաշրջանում համակարգչով շարուած հայկական առաջին պարբերականն է Հայկական ժողովրդային Շարժում կազմակերպութեան Լիբանանի պաշտօնաթերթ Երկաթէ չերեփ Ամաթերթը, որի նոր շրջանի համակարգչով շարուած առաջին համարը լոյս է տեսել 1988ի փետրուարի առաջին օրերին:

³⁴ ՄԱՀՕ, էջ 80:

³⁵ Նոյն:

³⁶ Այդ նշանաբանից, ինչպէս նաեւ իր անուան «Խորհրդային» բաղադրիչից առաջինը հրաժարուել է ՀՆՍՀ Լուսաւորութեան մինիստրութեան Խորհրդային դպրոց թերթը. այն Դպրութիւն է վերանուանուել 1989ի 36րդ, սեպտեմբերեան համարից. ՀԿԿ ԿԿ Բիւրոն 1989ի Յունիսի 21ի նիստում հաւանութիւն է տուել թերթի անուանափոխութեանը, այն հիմնաւորելով այն իրողութեամբ, որ թերթը դարձել է ՀՆՍՀ Լուսաւորութեան եւ Բարձրագոյն կրթութեան մինիստրութիւնների եւ Պրոֆսիտնալ կրթութեան պետական կոմիտէի միաւորմամբ ՀՆՍՀ Ժողովրդական կրթութեան մինիստրութեան պաշտօնաթերթը, որով իր նոր անունով, թերթը «լիովին համապատասխանելու է նոր բովանդակութեանը». տե՛ս՝ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ.1, ց. 83, գ. 10, թ. 69, 140, 141: Թերթի նոր անունով առաջին համարից էլ կոմունիստական նշանախօսքը փոխարինուել է հայերէնի ալբոսէնով գրուած առաջին նախադասութեամբ՝ «Ճանաչել գիմաստութիւն եւ գիւրատ, ի-

- մանալ զբանս հանճարորդ: Թերթի այդ տարիները գլխավոր խմբագիր Լիւդուիգ Կարապետեանի բանաւոր վկայութեամբ, նշանախօսքի փոփոխութիւնը եղել է պատահական եւ քաղաքական լատուկ դիտաւորութիւն չի ունեցել:
- ³⁷ Ամերիկայի ձայնի» հայկական բաժանմունքի հետ 1988ի Օգոստոս 5ին կալցացած հարցազրուցում, Պ. Հայրիկեանը Հայրենիքը լայտարարում է ԱՊԻ Հրապարակաթիւն վարժերականի վերանունում. տե՛ս՝ Անկախութիւն, 1988, No. 33, 15 Օգոստոսի, էջ 18:
- ³⁸ Թ. Համբարձումեանը մեզ բանաւոր հաստատեց, որ Հայրիկեանը ԱՊԻ հանդէսի անունափոխութիւնը կատարել է հենց այս նպատակով:
- ³⁹ Garo Ulubeyian, "The Independent Press of Armenia", Ապարէջ օրաթերթի անգլերէն բաժին, Լոս Անջելոս, 1988, 15 Հոկտեմբերի, էջ 21:
- ⁴⁰ Նոյն:
- ⁴¹ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 30, Թ. 3, 4:
- ⁴² Գրքերի աշխարհ, ամսաթերթ, Երեւան, 1988, No. 12, 25 Դեկտեմբերի, էջ 1:
- ⁴³ Նոյն, էջ 3:
- ⁴⁴ Sredstva massovoy informatsii Armenii [Հայաստանի զանգուածային լրատուամիջոցները], NGO Team, Երեւան, 1996, էջ 47:
- ⁴⁵ 1991ի կէսերին, Կայծի շարունակութիւնն եղող վերածնունդ թերթը ու նրա խօսք լաւելուածը դեռեւս շարունակում էին պատասպարուել տնականերում:
- ⁴⁶ «Հայուրալի» արտադրա-շինարարական կազմակերպութեան վարչութեան, կուսակցական կոմիտէի, արհեստակցական միութեան եւ ԼԿԵՄ կոմիտէի այս պաշտօնաթերթի հրատարակութիւնը ՀԿԿ ԿԿ Բիւրոն թույլատրել է իր 1989ի Դեկտեմբերի 2ի նիստում ընդունած որոշումով, ընդառաջելով ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջարկութեանը, հաշուի առնելով այն, որ հայերէնով հրատարակուող քաղաքային Բանուոր թերթը «չի բաւարարում անձնակազմի՝ տեղական լրատուութեան պահանջները». տե՛ս՝ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ. 15, Թ. 44, 49, 50:
- ⁴⁷ Դրուժբան հիմնել է ՀԿԿ Կոմուսի Կիրովականի քաղկոմը իր Յունուարի 12ի որոշումով, որպէս քաղաքային Կայծի թերթի տասնօրեայ լաւելուած, թողարկման պատասխանատու նշանակելով Կայծի խմբագրութեան անդամ, Կոմունիստի սեփական թղթակից Նարեկ Մեքրոպեանին: Սակայն, ՀԿԿ ԿԿ գաղափարախօսական բաժինը մերժել է հաստատել առանձին լաւելուածի կարգավիճակով թերթի հրատարակութիւնը, երկրորդ նրանից, որ ԽՄԿԿ ԿԿ որոշումով, քաղաքային թերթերի հաստիքների մեծացումը ԽՄԿԿ ԿԿ բացառիկ իրաւասութիւնն է: Եւսելուածի փոխարէն, բաժինը առաջարկել է Դրուժբան հրատարակել Կայծի նպատակային էջի կարգավիճակով՝ ռուսերէն լեզուով. տե՛ս՝ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 30, Թ. 25-27: Այդուհանդերձ, Դրուժբան լոյս տեսաւ անջատ լաւելուածի կարգավիճակով:
- ⁴⁸ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 87, գ. 30, Թ. 40, 41, 48-50: Գուգարքի շրջկոմը ռուսերէն նիւթերի հրապարակումը բացատրում է ոչ միայն եկուոր շինարարների պահանջները բաւարարման անհրաժեշտութեամբ, այլեւ նրանով, որ «շրջանի երկու գիւղեր (Ֆիդոխտովո, Լեւոնտովո) ռուսական են». տե՛ս՝ նոյն՝ Թ. 50:
- ⁴⁹ ՀՀ ՀՔԿԳ ԿՊԱ, ֆ. 1, ց. 82, գ. 30, Թ. 140:

- ⁵⁰ Նոյն:
- ⁵¹ Նոյն, Թ. 141:
- ⁵² Նոյն, Թ. 142:
- ⁵³ Նոյն:
- ⁵⁴ Նոյն, Թ. 142-143:
- ⁵⁵ Նոյն, Թ. 145:
- ⁵⁶ Sredstva massovoy, էջ 91:
- ⁵⁷ «Ինքնահրատ» եզրը առաջին անգամ օգտագործել է ռուս ալլախոհ գրող Նիկոլայ Գլազկովը 1952ին, իր ձեռագրի վրայ ռուսերեն նշելով "samsebyeizdat" տե՛ս՝ Suetnov, էջ:
- ⁵⁸ Նոյն, էջ 11:
- ⁵⁹ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 82, գ. 22, Թ. 15 եւ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ. 9, Թ.133,151:
- ⁶⁰ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 82, գ. 22, Թ. 15:
- ⁶¹ 1991ին նահատակուել է Արցախի Հասանաբադ գիւղի ինքնապանտապանական մարտերում:
- ⁶² 1990ի վերջին հրատարակուելիք դպրոցական երկու ալլ թերթերը եւս՝ հայերէն Ազգայրաբն ու ռուսերէն Դիւարդը (երկիսօսութիւն) քաղաքական շեշտուած բովանդակութիւն էին ունենալու:
- ⁶³ Ազատ Հայք, շաբաթաթերթ, Երեւան, 1989, No. 19, 18 Յուլիսի, էջ 2-3:
- ⁶⁴ «Նուիրատուութիւն», Ազատ Հայք, 1990, No. 4-5, 31 Յունուարի-7 Փետրուարի, էջ 16:
- ⁶⁵ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ. 10, Թ. 68, 139:
- ⁶⁶ Վահան Յարութիւնեան, «Պատմական ակնարկ», Ազատութեան աւետարեր, Երեւան, 1989, No.1, էջ 6:
- ⁶⁷ Նոյն, էջ 7:
- ⁶⁸ Տե՛ս՝ Ռ. Համբարձումեանի կենսագրականը:
- ⁶⁹ Նկատի չենք ուենցել 1996ից յետոյ ներկագմակերպական շրջաբերականի կարգավիճակով պարբերաբար լոյս տեսնող Անկախութիւնը եւ նոյն կարգավիճակով հրատարակուող Հայրենիքը:
- ⁷⁰ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ.10, Թ. 69, 70, 142:
- ⁷¹ Հայաստան, շաբաթաթերթ, Երեւան, 1989, No. 9, 6 Սեպտեմբերի, էջ 6:
- ⁷² ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ. 15, Թ. 24, 36:
- ⁷³ Լրատու Հայաստանի Գիտնականների Միութեան, Երեւան, 1989, No. 1, 10 Հոկտեմբերի, էջ 1:
- ⁷⁴ Նոյն, No. 2, 1990, 26 Մարտի, էջ 3:
- ⁷⁵ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ. 79, Թ. 2, 13, եւ ՀՀ ՀՔԿՓ ԿՊԱ, ֆ. 1, ց. 83, գ. 81, Թ. 128, 129:
- ⁷⁶ Երկիր Նախիր, շաբաթաթերթ, Երեւան, 1994, No. 33, 22 Սեպտեմբերի, էջ 8:
- ⁷⁷ Հայաստան, ՀԱԱԿԻ Ռ. Պետրոսեանի Թեւ, 1990, No. 5, Մարտի 17:

⁷⁸ ՀՀում Ուկրաինայի արտակարգ եւ լիազօր դեսպան Ալեքսանդր Բոժկովի ելույթը ՄԱԿի Հասարակական Տեղեկատվության Բաժանմունքի 1997, Մայիսի 3ի հանդիսութեանը. ՄԱՀՕ, էջ 52:

THE INCEPTION OF
THE FREE ARMENIAN PRESS IN
THE SOVIET UNION
(1985-1989)
(Summary)

GEVORG YAZEJIAN

The author, an eye-witness of the time, describes the impact of *Glasnost* and *Perestroika* and their aftermath on Soviet Armenia. Though the emphasis is on the birth of the free Armenian press and its evolution in the first five years of Mikhail Gorbachev's tenure, these are intertwined with the political, social and national issues of the day, mainly the Karabagh conflict.

The author describes the state mechanism to control all published material in Soviet Armenia. This control was legitimized through the state legal system by penal code articles 65, 66, and 67. The office entitled to undertake this task was the Armenian branch of the State *Glavlit*. The whole process of publishing any printed material in the Soviet Union of the 80's is depicted in the article in great detail.

The situation was partly ameliorated when Mikail Gorbachev became the First Secretary of the Communist Party of the Soviet Union.

The author asserts that the underground free press was the main outlet that disseminated liberal and nationalistic ideas, made the masses aware and called them into action.

The author details chronologically the periodical publications of the free press, their birth and duration, their editors, their political views, the methods by which they were printed and distributed as well as their strong influence on the masses.

